

Կը բաժնրի ու կը մընայ անբաժան
 Նըբարիին պէս.—ան նըբարին է՝ որ կ'իյնէ
 Ամէն առ տու սեղաններուն վրայ մեր
 Մարտիրոսեան սրինգըլայ խորհուրդին :
 Ու ես կ'երթամ դէպ ի աղբի՛ւրը լոյսի . . .
 Քանի՞ հազար, կամ քանի՞ բիւր օտրիներ
 Պէտ է որ ա՛յսպէս քայն .
 Քոնի՞՞ անգամ պէտ է իյնամ կարկէտ
 Ճանապարհի վրայ՝ բացուած
 Նրպատակին պարտիմաս բրոցով . . .
 Զրգիսեմ ես .—միայն թէ, ո՛վ եղբայրներ,
 Ո՛վ խաչ նանդդ եղբայրներ,
 Քողուցէ՛ զիս նամարտութեանս մէջ միմակ,
 Ա՛յնքան միմակ ես ա՛յնքան լուս, որ լրբեմ
 Սրբոս տոփիներն՝ որ իմ բնեամ նրապս է
 Նրազնեուն մէջէ բիւր :
 Անեւով լի ես արեւները սանդղ
 Ու զիս վրայ մի՛ սրբուհէ
 Ձեր տուր՝ մաւով թեւի մը պէս ուրուրի :
 Եւ ո՛չ ալ զիս կանչեցէ՛
 Խրննայնեուն ձեր զուարթ՝
 Ուր բողոքիսը կը գարնէ նուագարան :
 Ընդունա՛յն է խոսանալ
 Սրբոս կոյտեր, սիրոս սպիտն է դատարկ՝
 Եւ ես կ'երթամ դէպ ի աղբի՛ւրը լոյսի . . .

ԳՆԱՆԻՆԷԼ ՎԱՌՈՒԹԱՆՆ

ԻՄ ՅԻՇՈՂՈՒԹԻԻՆՆԵՐՍ



(Շարունակութիւն)

2.

Շարաթ մը յետոյ, Նշանուած էի Անտոն
 Գարայի Տէտ :
 Ան իր մօրաբորը որդւոյն քով առաջին
 դրագիր էր :
 Օրթագիրի մէջ՝ Գարաեան Սահակ ազա
 յարգուած մարդ էր : Շատ խիստ էր իր որդ-
 ւոցը Տէտ : Լսելով որ իր որդին թատրոնի մէջ
 խաղացող աղջկան Տէտ պիտի պսակուէր, սաս-
 տիկ բարկացեր էր :
 — Ա՛լ տունս գործ չունիս, բեր էր. պաշ-
 տունէդ ալ Տրաթարուած ես. գնա՛ :
 — Շա՛տ շնորհակալ եմ, կը պատասխանէ,
 ու տունէն դուրս կ'ելլէ :

Գարով ինչ մօտ կը պատմէ պատահածը .
 — Ազնի՛ւ, ես պանդոկի մէջ սենեակ պիտի
 վարձեմ : Գուն ինչմէ երես մի՛ գարձըներ . ես
 գործ կը ճարեմ, քեզ ու մայրդ կը պահեմ՝
 ինչպէս որ պէտք է :
 — Գուն ալ Տանգիտու եղբր, Անտոն. ես
 ալ այնքան աղքատ չեմ. ունիմ Տագար ոսկի .
 ատով դուն կրնաս գործ մը բռնել :
 Պանդոկի մէջ կ'ապրէր, բայց ամէն օր մեզ
 մօտ կը ճաշէր :
 Մէկ կամ երկու ամիս էր որ Նշանուած
 էիրք, պարոն մը սկեսրայրիս Տաւատտեր էր թէ՛ .
 — Եթէ՛ քու Տարննացուչ Հարաչեան է, է,
 կ'ապահովցնեմ քեզ որ Տարննեուչ մէջ առա-
 ջին տեղը պիտի բռնէ : Գնա՛ անգամ մը տես,
 յետոյ ինչ կ'ուզես ըսէ :
 Երկրորդ օրը՝ Նշանածիս Տէտ ծեր մարդ
 մը Ներս խնայ : Զգացի թէ անոր Տայրն է :
 Չխոսեաւ թէ չէ, Տամուտրեց .
 — Կեցցե՛ս, Անտոն բաւ, այսպիսի Տար-
 նացու ես չէի կարող ձարել քեզի :
 Բիշ մը նստել յետոյ, ինչպէս որ մեզ
 երկուքս մինակ թողուն : Ու երբ մինակ մնացինք,
 բաւ ինձ .
 — Ազնի՛ւ, աղջիկս, այժմ ինչդիրք մը
 ունիմ քեզի . տեսնե՛ք պիտի յարգե՛ս :
 — Հայր, Տրամայեցէք, վատահ եղէք որ
 ձեր Տրամանը իբր պատգամ պիտի ընդունիմ :
 — Իմ ինչդիրքս է որ ձեր պսակը կա-
 տարուի պապական եկեղեցւոյ մէջ : Կինս ու ես
 շատ կրօնամոլ ենք :
 — Սիրելի Տայր, Ներեցէք ինձ, քանի՞
 զաւակ ունիք :
 — Տանընտրու :
 — Այժմ կարգը ձերն է Տարքընելու թէ
 իմ մայրս քանի՞ զաւակ ունի : Մէկ Տատ միայն :
 Ու ինքն ալ կրօնամոլ է որքան դուք : Ան ալ
 սնուցեր մեծցուցեր է զիս այն յոյսով որ պիտի
 պսակէ զիս այն եկեղեցւոյն մէջ ուր զիս մկրտե-
 ր : Այժմ ըսէք, կարո՞ղ եմ թքնել այն կուրծ-
 քին վրայ որ ինձի կաթ է տուեր, թքնել այն
 մօր վրայ որուն միակ յոյսն եմ ես : Հիմա որ
 ամէն բան իմացաք, ինչդրեմ՝ Տրամայեցէք, ես
 պատրաստ եմ ընելու :
 — Ո՛չ, ո՛չ, սիրելի՛ աղջիկս :
 Կանչեց Նշանածս .

— Անտոն, դուս պեւք է՛ պատկուխ լուսաւորչական եկեղեցոյ մէջ, ես կուտամ իմ հայրական օրհնութիւնս :

Հաս յուզուեցայ, կարծեցի թէ հայրս վերակենդանացած էր :

Մինչև մեր հարսնիքը, ամէն օր կուգար : Հաս էր սիրէր զիս, ես ալ զինքը շատ կը սիրէի : Ըփսոս որ շատ քիչ ժամանակ վայելեցի զինքը : Ամուսնութենէս տարի մը յետոյ, արդէն կորսնցուցած էի զինքն ալ :

1875 սեպտեմբեր 14ին, պատկուեցանք, և մեր մեղրալուսինը անցուցինք Նիկոմիդիա, ուր ամուսնուս պաշտօն էր ստանձնէր : Երկաթուղւոյ գծին ու կամուրջները կը շինուէին մինչև Անկորա : Նիկոմիդիայի մէջ բացած էին գործարան, Ահա այդ գործարանին մէջ առաջին գրագիր էր Պարոնի մը ընկերակցութեամբ՝ բերել տուաւ Թալէաներ ու տերութեան յանձնեց : Բայց մեք զեռ չէինք գանձած զրամը, տերութիւնը չկարենալով վճարել թէ՛ գործաւորներուն և թէ՛ պարանքատիրոջ, փակուեցաւ գործարանը : Նշնպէս զագրեցաւ երկաթուղւոյ գծի շինութիւնը :

Վեց ամիս հապիւ էր անցեր, մենք կորսնցուցնիք թէ՛ մեր սեփական զրամը և թէ՛ ուսնիկներս, տեղափոխուեցանք Պոլիս՝ Օրթազիւլ թաղը, 1876 թուականին :

Այդ միջոցին, Մաղաքեան կազմեց խումբ մը՝ Միմնովիչի արհացութեամբ, և սխաւ տալ շարք մը ներկայացուցիչներ փերայի Ալքազար թատրոնին մէջ :

Գերասաններն էին Մաղաքեան, Արամեան, Սիսակ, Թրեանց, Տեօհաճեան և՛ կարծեմ՝ Մեակեան : Գերասանուհիներն էին Աստղիկ, Սիրանոյշ, սիկին Ալախտէեան :

Անպիկալ դիպուած մը հիմէն տապալեց այդ գործը : Միմնովիչ Օսմանեան Պաշայի գանձապահն էր, զեղծման ամբաստանութեամբ բանտարկուեցաւ : Ներկայացուցիչը զագրեցան

Ամերիկեան՝ Պոլիս գալով՝ փորձեց նոյն խմբով տալ ներկայացումներ Ալքազար թատրոնին մէջ : Բայց խեղճը չլայողեցաւ : Իր լեզուն Պրսեցոց համար խորթ կը հնչէր : Եկաւ ինձ մօտ՝ խորեց մասնակցիլ :

— Օգնեցէք ինձ, սիկին, ես դժբաղդ մարդ եմ, որ եկայ և ձեզ ամուսնացած գտայ :

Խեղճը կը կարծէր թէ մերժմանս պատճառը ամուսնութիւնս էր :

Հարած մը յետոյ՝ դարձեալ գալով մեզ մօտ, զիս Գտաւ շատ գէշ հիւանդ վիճակի մէջ : Այն ատեն ներողութիւն խնդրեց : Երեք ամիս անկողին մնացի՝ քիչ մը ջուրս առած ըլլալուս հետեւանքով :

Ամերիկեան կարծեմ անմիջապէս դարձաւ Թիֆլիս :

Գերասանական խումբ չկար. կամ պէտք էր Արարովեանի խմբին միանայինք և կամ պարապ նստէինք : Յաջորդ « սեզօն, ին համար » Եղիզաբար Միլիթեան վարձեց Փրասնական թատրոնը : Չուհաձեանի ղեկավարութեամբ պիտի ներկայացնէինք շարք մը օփերէթներ, Արիֆ, Քեօօէ, Լէպլէյնիշ Լորչօր, ևն :

Հաս հնչուն և կիր ձայն ունէի, Եկան ինձէ խնդրել որ ընդունիմ առաջին երգչուհիի պաշտօնը : Առաջակեցցին 50 սոկի ամսական, Փերա՝ առնուազն 5 սոկի բնակարան, զեսպակ որով պիտի կարողանայի ամէն օր երթալ փորձի : Տհաճութեամբ ըն՝ զունեցայ պայմանը : Ստիպուած էի, քանի որ ոչ մէկ տեղ տամ կը ներկայացնէին : Օրթագիւղի Հայոց թաղը բուրովին հրոյ Ճարակ եղած էր :

Հաստատուեցանք Փերա : Խումբը բաղկացած էր մօտ քառասուն հոգիէ :

Թրքական Օփերայի երգիչ զերասաններն էին Գարեգին Ռշտունի, Անտոն Ռշտունի, Նայեան, Սիսակ, Չափրաստ, Միշէլ Պրէպերեան, Խաչիկ Փափազեան (թննօր) : Գերասանուհի-երգչուհի՛ ես ինքս. մնացեալները հոսկէ հոսկէ հաւաքուած մարդիկ էին :

Չուհաձեանի տրամադրութեան տակ կար օրբէսթը մը, կարծեմ 35 հոգիէ բաղկացած : 250 սոկի ամսական կը ստանար իմիմյան օրքեսթրը : Ալ խումբը չեմ գիտեր ինչ կ'արժէր : Անհաշիւ կը ծախսուէր : Ամէն իրիկուն թատրոնը լեցուն էր, բայց կարելի չէր այդ ծախսը ծածկել :

1878ի հոկտեմբեր 24ին, ունեցանք աղիկ զաւակ մը : Գեորգ Ալվազեան կնքահայր եղաւ : Անունը դրինք Պերձուհի :

Այդ օրէն ամիս մը յետոյ, արդէն թատրոնը փակուած էր :

է.

Տեղափոխուեցանք Պոլիս :

Ֆասուլեաճեան ինձ մօտ գալով համոզեց ընկերակցութեամբ երթալ Ադրիանուպոլիս :

— Ամսական քառասուն զրուշով սուն մը կարող ես վարձել, ըսաւ, և քսան զրուշով լաւ ծառայ :

Այնքան աժան ցոյց տուաւ ամէն բան, որ եթէ մենք ծախէինք երկու հարիւր զրուշ, արդէն շատ ու շատ էր :

Ես խնդրեցի որ ինձ ամսական տայ և առաջարկեցի՝ այդ Աւետեաց Երկիր համար՝ ուր Կիտի ապրէինք մանանայով 13 ոսկի : Ընդունեցաւ :

Վերջապէս, ճանապարհածախսը ինձմէ հայթայթելով գացինք Ֆասուլեաճեանի սիրելի քաղաքը : Այդտեղ, իմացայ թէ մեր ներկայացումները պիտի ըլլային միայն թուրքերէն, որովհետև Ադրիանուպոլսոյ Հայերը թըքախօս են :

Խումբին մը կային գերասաններ՝ Պ Պ, Ֆասուլեաճեան, Սիսակ, Հոյսեան, Գէորգ Պէրպէրեան, Ռուբէն Պիննէմէճեան, Թաշճեան, գերասանուհիք՝ Տիկ. Ֆասուլեաճեան, Ազնիւ Արապաճեան, Տինեղաւտ Պէրպէրեան և Հրաչեայ :

Առաջին քայլէն՝ ատեցի թէ՛ թըքախօս քաղաքը և թէ՛ Ֆասուլեաճեանը, որ զիս շարաւար խաբեց : Քսան զրուշի փոխարէն, փոքրիկ տան մը համար վարձք կը վճարէի ամսական երկու հարիւր յիսուն զրուշ :

Առաջին ներկայացումն էր «Քաթերին Հովուար» : Բեմին անմիջապէս առջեւը նստած էր հարիւրապետ մը, հարբած, և Հարունակ կը գոռար :

— Այլանճ՛մ, աշըք (Աւ՛ճուս, սէ՛րս) :

Գերասանները կը խանգարէր իր անվերջ «այլանճմ»ներով :

Ես անմիջապէս խնդրեցի Ֆասուլեաճեանէն թոյլ տալ ինձ որ երթամ Պոլիս : Բայց, նա բացատրելով թէ ինչ ղրլլար խմբին վիճակը՝ եթէ ես ձգէի երթալ, համոզեց զիս մնալու : Երկու ամիս յետոյ, Ֆասուլեաճեան սկսաւ

— Ժողովուրդը կը ցանկայ տեսնել Հերանոյշը :

Չէի գիտեր թէ այդ անունով գերասանուհի կայ, և թէ Ֆասուլեաճեան շատ մտրիկ է անոր :

— Ֆասուլեաճեան, ըսի, քսանի որ հոս գալերնէս յետոյ դու ինձ մերթեջիք ամսական տալ, և ստիպեալ՝ ընկեր ենք, ես չեմ կարող ամսական տալ, այն ալ տասը ոսկի՝ ինչպէս կ'առաջարկես, օրիորդի մը որուն անունը առաջին անգամ կը լսեմ :

Ֆասուլեաճեան բերել տուաւ Հերանոյշը : Ես հրաժարուեցայ խումբէն :

Հերանոյշ եկաւ : Բայց զեռ բեմ չէր ելած : Եկաւ Ֆասուլեաճեան, խնդրեց, աղաչեց որ կրկին ընկերակցեմ :

— Անիկա Թուրքաց փիէաներուն մէջ պիտի կատարէ առաջին գերերը, իսկ երրորդական գերերուն մէջ՝ դուն :

Ճիշտն ըսելով՝ ես ընդունեցայ, որովհետև կը ցանկայի տեսնել գեղարուեստի այդ քրմուհին : Առաջին ներկայացումն էր «Հէյ վահ» , որուն մէջ կային երկու թուրք երիտասարդ կանանց գերեր :

Առաջին կնոջ գերը կը կատարէր Հերանոյշ, իսկ երկրորդը՝ ես :

Ելանք բեմ : Իմ երկրորդ գերս եղաւ առաջին :

Քեմալ պէյ գրած ունէր «Աթան» (Հայրենիք) տիտղոսով խաղը : Արդէն ներկու անգամ ներկայացուցած էինք «սէգուն» սկիզբու Հասոյթ եղեր էր ամենաքիչը յիսուն ոսկի : Ֆասուլեաճեան ծանոյց ինձ թէ այդ խաղին ներկայացումը ծախեր էր քսանուհինգ ոսկի, այն պայմանաւ որ անոր մէջի Ձէքիէի գերը պիտի կատարէ Հերանոյշը :

— Շատ լաւ ես ըրեր, Ֆասուլեաճեան, ըսի : Ես ալ քսանուհինգ ոսկիի ծախեցի՝ «Անճէլօ Մալիփիէրի», խաղը, զոր այս «սէգուն» ներկայացուցեր ենք երկու անգամ, և որուն մէջ Թիզպէի գերը կատարեր է կինգ ու տուր է հասոյթ երկու հարիւր զրուշ : Այս պայմանաւ ծախու առին որ Թիզպէի գերը ես կատարեմ :

— Ի՞նչպէս, դուն ի՞նչ իրաւունքով երկոյթ կը ծախես : Եւ վերջապէս չե՞ս գիտեր որ այդ գերը իմ կնոջս գերն է :

— Ես ծախեր եմ այն իրաւունքով որով դուն ես ծախեր : Գալով Թիզպէի գերին, հոգ չէ, ես չեմ կատարեր : Բայց դուն ալ պէտք է

ընթես քսանուհինգ ոսկի ընկերութեան պարտքէն :

— Ո՛հ, ոչ կը ընչեմ և ո՛չ ալ կը ծախեմ :

— Քանի որ այդպէս է, Ֆասուլեաձեան, ես ալ չեմ ծախեր «վաթան»ի ներկայացումը : Կա՛մ կը ստորագրես «Անձէջօ»ի պայմանը և կամ Հերանոյշը չի ներկայաներ Զէքիէի գերբ :

— Ձիս կտեսնե՛ս ալ չեմ ստորագրեր : Ինձի Ֆասուլեաձեան կ'ըսեն :

Երգէն յայտարարութիւնները ցրուած էր : Գացի անմիջապէս տպարան, հարիւր յիսուն հատ յայտարարութիւն տպել տուի՝ Զէքիէ-Հաւչեայ : Այդ կերպով հրատարակի վրայ կար երկու տեսակ յայտարարութիւն, մէկին մէջ Զէքիէի գերբը կը կատարէր Հերանոյշը, իսկ միւսին մէջ՝ Հրաչեան :

Այդ օրը Ֆասուլեաձեան Հերանոյշի հետ երթալով Թուրքերուն մօտ, պաշտպանութիւն ինչորեց . անոնք ալ խոստացան : Այդ ներկայացումները կը տրուէին թանգարանի սրահին մէջ : Ներկայացման իրիկունը, թանգարանի պարտէզին մէջ, ժողովուրդը երկու մասի բաժնուած էր : Հայ, հրէայ և եւրոպացի հասարակութիւնը իմ կողմն էր, իսկ Թուրքերը՝ Ֆասուլեաձեանի՝

— Մենք Հրաչեայ չենք ուզեր : Արաձանակ կը քաշենք վրան, եթէ բեմ ելլէ : Մենք Հերանոյշ կ'ուզենք, էֆէնտիմ, Հերանոյշ :

Հայք և եւրոպացիք կը պատասխանէին .

— Դուք Թուրքերո՞ք փորձումանութիւն կը կազմէք : Կառավարութեան դուռը ծառայող մէկ քանի գրագիրներէ դատ ուրիշ Թուրքեր չկան թատրոն յաճախող : Ուրեմն թատրոնը պահպանող մենք ենք, և մենք կը ցանկանք տեսնել Հրաչեան : Թող Ֆասուլեաձեան ստորագրէ «Անձէջօ»ի պայմանը . մենք դուք կ'ելլենք թատրոնէն և երբ Հրաչեան ներկայացնէ Թիպպէ, այն ատեն կուգանք զայն տեսնելու :

Հաւաքուած բազմութիւնը կարող էր թանգարանի սրահին կրկնապատկեր լցնել :

Այդ միջոցին ես կը հագուէի իմ սենեակի, իսկ Հերանոյշ իր սենեակին մէջ :

Վարագոյրին բացուելու ժամն անցեր էր արդէն : Ժողովուրդը կը սուլէր և փայտերով կը զարնէր տախտակամածին, բայց վարագոյրը չէր բացուեր : Ֆասուլեաձեան, երկու ձեռքով գրուիւր բռնած, շուարած, չէր գիտեր, ինչ ընելիքը :

Մայրս ու աճուսինս ինձ կը թախանձէին .

— Ազնի՛ւ, Թուրք են, կարող են արաձանակի հարուածով մը քեզ սպաննել . խղճա՛մ մօրդ, խղճա՛մ փորձիկդ :

— Մայրի՛կ, այն ըրպէն որ ես տեսարան եկայ, ալ ձեզի չեմ պատկանիր : Ի՛նչ որ պատահելու է՝ թող պատահի : Կա՛մ պիտի ստորագրէ և կա՛մ պիտի բեմ ելլեմ :

Այդ ըրպէն իսկ, ժողովուրդը ներս խուժեց : Ամէնուն ձեռքը դաւազան կար : Գտան Ֆասուլեաձեանը :

— Շո՛ւտ ստորագրէ՛, թէ ոչ հի՛մա քեզ կը սպաննենք, բերի՛վ ստորագրել տուին պայմանը և յանձնեցին ինձի :

Բայց ես տուի և պատուեցի պայմանագրութիւնը, բերի՛վ Ֆասուլեաձեանին .

— Ասկէց ետքը՝ պէտք չկայ որ այս թատրոնին մէջ ես խաղամ . բաւական է որ ստորագրեցիր :

Դուքս էլայ թատրոնէն : Թատրոնին մէջ մնացին քանի մը Թուրքեր : Այժմ ի՛նչ ընէի որ կարողանայի Ազրիանուպոլսու մէջ ունեցած պարտքս վճարելով վերադառնալ Պոլիս :

Երկրորդ օրն իսկ, հրէայ թատերասէրները եկան զիս գտան և ըսին .

— Յիկին, կ'ուզենք առաջարկութիւն մը ընել, բայց չենք համարձակիր : Խնդրենք, ըսէ՛ք, կարելի չէ՞ որ դուք մեզ հետ ներկայացում մը տաք սպանեօ լեգուով :

— Բայց ես չեմ գիտեր սպանեօլերէն :

— Մենք կուտանք ձեզ ֆրանսերէն փիւշը, «Փօլ ձօն», դուք կը ծանօթանաք բոֆանդակութեանը : Մենք դերը կը կարգանք սպանեօլերէն, դուք կը գրէք հայերէն : Դերի դիմացը կը դրուին բառերուն հայերէն բացատրութիւնները : Առաջին ներկայացումը կ'ըլլայ ի նպաստ մեր դպրոցին . դուք կը ստանաք յիսուն ոսկի : Երկրորդ անգամ՝ նոյն փիւշը կը խաղանք ի նրպաստ ձեզ :

Ո՛վ բարեկամներս, լսեցէք, դատեցէք, թէ ի՛նչպիսի միջոցներով մենք պահպաներ ենք մեր գոյութիւնը :

Ընդունեցայ պայմանը : Յասնուհինգ օրէն արդէն պատրաստ էինք : Փորձերը յաջող էին : Ներկայացման իրիկունը, տեղերուն գինը

կրկնապատիկ նշանակուած էր : Լրէաներէն աւելի Լայ ու Եւրոպացիք կային : Ֆասուլեաձեան ևս այդ իրիկուն ներկայացու՞մ պէտք է տար , բայց ժողովուրդ չըլլալուն պատճառաւ փակեց թատրոնը :

Բեմ ելայ թէ չէ , ձեռքովս յենուեցայ ամոռին : Ար վահնայի որ վար շինամ յուզմունքես : Միտոս սաստիկ կը գարնէր , բայց երեսէս բան մը ցոյց չէի տար :

Լրէաները կը պնդէին թէ՛

— Անիկա անպատճառ առաջուց գիտէր սպանուելու . յայտնի է արտասանութիւնէն : Երկրորդ թէ երրորդ արտրուածքն , կար յանդիմանական կտոր մը աղջկան ուղղուած . երբ արտասանեցի ոգևորութեամբ սա խօսքերը . «Մի փարսո՞ն տեմանտա , փարսո՞ն , իժա տեզ նախուրատա , քէ տուադիս էլ բայօ , տեւա վեն կան սա էթէնա , ի քէ խառվածէս քօնէլ լաքառա սէ դու մատրէ» , ծափահարութեան վերջ չկար :

Արկնեցիքը նոյն խաղը ի նպատս ինծի ևս Այդ գիշեր ստացայ վաթսուս ոսկի զուտ հասոյթ :

Ֆասուլեաձեանի խումբը գէշ վիճակի մէջ էր : Ամէն իրիկուն թատրոնը կը բանային ու կը գոգէին առանց ներկայացման՝ ժողովուրդ չըլլալուն պատճառով :

Վերջապէս Արքիանուպոլսոյ աղաներէն մէկ քանին եկան սուսն , աղաչեցին որ նորէն միանամ Ֆասուլեաձեանի խմբին : Ես առաջարկեցի երկու ոսկի ամսական :

— Տիկին , ըսին , ի՞նչ կ'ըսէք : Մնանկներուն հիւտան այդ գումարը : Միթէ ձեզի կը վայրէ՛ այդպիսի պայման գնել :

— Պարոններ , դուք չէք ուզիր զիս հասկնալ : Մենք որքան որ շահելու ըլլանք , ընկերութիւնը միտ պարտական պիտի մնայ : Ֆասուլեաձեան , Տարիւրին 15 փեկին համար կը ստանայ , 17ը իրեն , 15 կոնը , 15 «աքսետուառ»ի , 10 ոսկի ալ ! Էրանոյշը պիտի ստանայ . իսկ ես ոչինչ կը ստանամ և դեռ պարտական ալ կը մնամ ամսական 10 ոսկի : Այո՛ , աւելի լուս է երկու ոսկի ամսականով ծառայեմ իրեն մօտ , որպէս զի գէթ ամէն ամիս 10 ոսկի պարտական չմնամ : Այսպէս՝ չեմ ընդունիր ընկերութիւն , այլ երկու ոսկի ամսական և մէկ նպաստ :

Ֆասուլեաձեան շատ հակառակեցաւ . բայց մարդիկը պնդեցին .

— Ալ ի՞նչ կ'ուզես , շենք հասկնար : Երկու ոսկի՛ Լրաւեայ , դեռ նա՞զ կ'ընես :

Վերջապէս՝ կրկին միացանք :

Մէկ-երկու շաբաթէն իմ նպաստ էր : Պիտի ներկայացնէինք «չենդ և հաստարմութիւն» : Տեղերու գները կրկնապատկուեր էին : Բազմութիւնը այնքան էր , որ վալի փաշային որդւոյն համար հազիւ կարողացանք արձու մը ձարել : Այդ գիշեր ևս ստացայ 85 ոսկի :

Ֆասուլեաձեան , տեսնելով բազմութիւնը , կատեցաւ .

— Ա՛յն ձեզի երկու ոսկի ամսական հիմա դուք հաշուեցէք թէ ամսական ի՞նչ կը ստանայ :

— Եղբայր , միթէ քեզմէ՛ կ'առնէ այդ դրամը , պատասխանեցին . միթէ մեզաւոր է ժողովուրդը որ կը յարգէ իր դերասանուհին : Յարջող շարժուն , ֆասուլեաձեանի նպաստն էր : Սրահը(օթեակներ չունէինք) կէսէն աւելի պարագ էր : Զիս վերաւորեց՝ ըսելով .

— Ժողովուրդը կողպտեցիր : Տեսայ որ անկարելի էր այդ պարոնի օժտին մէջ գործել . ուստի առի ընտանիքս 1878ի մարտ ամսուն և եկայ Պոլիս հաստատուիլ :

Մայրս հիւանդ էր . քաղցիկ ունէր . չորս ամիս յետոյ՝ վախճանեցաւ :

Ը .

1877-78ի ձմեռնային «սեզոն»ը սկսանք ընկերութեամբ . Օրթագրեղի թատրոնին մէջ , իմ առաջնորդութեամբս : Ընկերներս էին Մանուկ Սիսակ , Անտոն Ռշտունի , Մատթէոսեան , Քիթթապճեան , Միշէլ Թոսպաթեան , Պէրպէրեան , Այվազեան , Ադամեան , Վերեղեան , Վիթթօր Էամտանճեան , Էերանոյշ , ևն .

Բարեփորաց ընկերութիւնը առանց վարձքի մեծ տուն մը դրաւ մեր ստամագրութեան տակ , ուր կը բնակէինք ամբողջ խմբով :

Ունէինք ներքին կանոնադրութիւն և պահեստի մետակ , որու մէջ պահ կը դրուէր մեր շահին հարիւրին տարա :

Այնպիսի սիրով էինք կապուած , որ կարող եմ ըսել թէ ընտանիքի մը անդամները չեն կրնար ըլլալ այնքան սիրով : Եթէ մէկին կոշիկը մաշած էր , ունեցողը անոր փոխ կուտար :

Ըստ արդէն թէ Օրթոգրիզը այրած էր : Լայրեր քիչ էին մնացած հոն , և թատրոնին վէսն իսկ չէին կրնար լեցընել : Շատ օրեր դերասանները առանց դրամի կը մնային : Ամէն մէկէն կ'առնէի տասը կամ քսան փարա , ու մէկ կողմէն փորձերը կ'ընէիք , միւս կողմէն զարդոցի պարտեզին մէջ կերակուր կը պատրաստէիք , միջնարարին , կը նստէիք կ'ուտէիք , "Պէ՛հ , պէ՛հ , սղա՛ք ի՛նչ պատուական կերակուր է , ըսելով :

Արամեանի և իմ նպաստներուն , թէպէտ գինը կրկնապատուած կ'ըլլային , թատրոնը լեցուն էր : Հարմանս ընկեր չէր : Ամէն մէկ կերպով Նամար իրեն կը վճարէիք հարկւր դրուշ : Այդ պատճառաւ անոր նպաստին հասոյթը ընկերութեան կը վերաբերէր :

"Սէզոնը վերջացաւ : Պահեստի գումարը բաժնեցիք , Խրաքանչիւր անդամի բաւական դրամ ինկաւ , որով կարողացան իրենց ակտիւքը Նոգալ : Սիրով գառուեցանք իրարմ :

Ամուսինս Ազրիանուպոլիս գնաց գործով , իսկ ես տան մը մէջ նստայ՝ փոքրիկ Պերճիկիս հետ :

1878 յունիսին , Սիսակ եկաւ ինձ մօտ .

— Գուն այսպէ՛ս կը սիրես ընկերներդ : Մեր նիւթական դրութիւնը շատ գէշ է : Քեզ համար հաց ես ճարեր , իսկ ընկերներուդ մասին չես մտածեր :

— Ես ի՛նչ կարող եմ ընել , Սիսակ , գործ կայ և չեմ գործեր :

— Ի՛նչպէս թէ չկայ , Ռուսներով լեցուն է Ազրիանուպոլիսը : Այնտեղ կարելի է մեծ գործ տեսնել :

— Տղայ՛ ես : Անոնցմէ ի՛նչ օգուտ : Մի՛թէ մենք կարո՞ղ ենք ուսուրէն ներկայացու՞մ տայ :

— Գրէ՛ ամուսնոյդ , թող գանէ այնպիսի մարդիկ որ կարողանան խումբը վարձելով տանիլ այնտեղ : Մենք կը ներկայացնենք անպատճառ վտուփի մը թուրքերէն լեզուով , որպէս զի կարողանանք թատրոն անուրը դնել : Իսկ մնացեալ մասը կը բաղկանայ շանսունէթներէ : Բոլոր ընկերներս կը խնդրեն որ այս գործը գուրեհ հանես :

Գրեցի ամուսնոյս : Կարապետ Ասատուրեան ընկերանալով Կարապետ Բանդիկեանի հետ , եկաւ Պոլիս խումբը վարձելու : Ինձ հետ կային

Ասողիկ , Սիրանոյշ , Գոհարիկ Շիրինեան , Մանուկ Սիսակ , Հրաւս , Չափրաստ , ևն .

Գացիք և սկսանք փորձելը :

Ես զիս շէզոք կը պահէի : Հացի համար բեմ պիտի ելլէիք : Փառք չէի սպասեր :

Իմ երգերս մէկ քանին Ասողիկը առաւ . մէկ քանին՝ Սիրանոյշը : Ես ալ թուրքերէն լեզուով "Քթէն գփոհո՞ս աղիկը՞ս պիտի երգէի :

Առաջին իրիկունը . ներկայացուցիք վտուփի մը մէկ արարուածով : Յետոյ բեմ կաւ Ասողիկը : Երգեց թէ չէ , ծափահարեցին և ծաղկեփունջ մը նետեցին՝ կուրծքին նշան առնելով , Ծաղկեփունջը փայտի վրայ էր շինուած , ինդ՝ չին կուրծքը ծակեցաւ , և լալով ներս եկաւ : Յետոյ ելաւ Սիրանոյշ : Ծափահարեցին և ծաղկեփունջ մը նետեցին ստամոքսին : Ատ ալ վերջացաւ :

Կարգը իմս էր : Հազիւ բեմ ելած , ուշադրութիւնս այն կողմէ էր ուրիշ կը նետէին ծաղկեփունջը :

Երգս վերջացուցի : Ծափահարեցին թէ չէ , ծաղկեփունջը եկաւ . բայց ես զգուշացայ , և ինկաւ գետին . ոտքովս զարկի , ու գնաց թաւալեցաւ ժողովրդին մէջ , ուր նստած կային տրակոններու վաշտէն զինուորականներ : Ասոնք բարկացան ու գանգատեցին .

— Ա՛ս ի՛նչ է . հայ գերասանուհին ոտքով ետ կը զարձընէ մեր նուիրած ծաղկեփունջը : Ոստիկանապետը , տեսարան գալով , թարգմանի միջոցաւ ըսաւ .

— Տիկին , ի՛նչու՞ կ'ուզէք զինուորականները վիրաւորել :

— Պարոն , ներեցէ՛ք , մտքէս իսկ չեմ անցընէր այդպիսի բան մը : Մեզ մօտ՝ ծաղկեփունջը կուտան իբր գոհունակութեան և յարգանքի նշան . իսկ ձեզ մօտ չեմ գիտեր ի՛նչպէս է : Ասոնց ձեռքը՝ ծաղկեփունջը նշան առնելու գործիք է : Ցեա՛ք , մէկ օրիորդին կուրծքը ծակեցին , միւսին ստամոքսը ցաւցուցին . ես զգուշացայ , և ոտքովս ետ դարձուցի :

— Իրաւուք ունիք , տիկին , անոք պարտաւոր էին աւելի քաղաքավար ըլլալ , ըսելով հեռացաւ :

Երկրորդ անգամ բեմ ելլելուս՝ ծաղկեփունջը սուրի ծայրն անցընելով ամենայն քաղաքավարութեամբ նուիրեցին :

Չօրականները կը ցանկային մուտք ունենալ քուլիսները : Մենք արգիլած էինք : Վերջապէս ստեփանապետին խնդրեցինք , և ան ալ երկու պահապան զինուորներ կանգնեցնելով տեսարանի դրան մօտ , արգիլեց անոց մուտքը :

Մէկ ամիս այս պաշտպանողական դիրքը բռնելէ յետոյ , այլ ևս հանգիստ էինք : Գուռը պահպանող չկար . բայց ոչ զք ալ չէր համարձակեր ներս մտնել :

Ես ամէն գիշեր « քթէն դժգոհ աղջիկը » երգելով ձանձրացուցի ժողովուրդը : Այնպէս որ բեմ ելած ատեն զիս չէին ծափահարեր : Սիրանոյշ , Ասողիկ , Գոհարիկ ունէին յարողութիւն : Ես անտարբեր էի , բեմ կ'ելլէի որպէս զի թիւը լրանար :

Օր մը ընկերներէս ոմանք գացին գանգատելու թէ՛ :

— Հրաշնայի անունը չկայ ժողովուրդին մէջ : Ան ամիսը կը ստանայ յիսուն սօկի , իսկ մենք այլքան :

Բանդիկեան կարպետը՝
— Իրաւունք ունիք , ըսեր էր :

Ես լսեցի , և անխորտակ հրաժարականս տուի , ըսելով .

— Մինչև տասնըճիսգ օր կուտամ պայմանաժամ : Գուէք իմ տեղս ուրիշ մը , որպէս զի ձեր թիւը չպակի : Բայց այդ ժամանակամիջոցին՝ երէք օր ինձ կուտայ օրքեսօքը , ես ալ փորձեր կ'ընեմ ու կ'երգեմ քանի մը նոր երգեր :

Ընդունուեցաւ պայմանս : Իսկոյն ամուսինս ուղարկելով Պոլիս՝ բերել տուի լաւ շանսնէթներ : Իրուներէն թարգմանել տուի « քթէն դըժգոհ աղջիկը » , նոյնպէս՝ Ըուպերթի « Մնաս բարովը » :

Երբ այդ երգերով բեմ եկայ , սաստիկ ծափահարուեցայ : Կարծէք ժողովուրդը ինձմէ բան մը կը սպասէր և լուռ կենալուս համար նեղացեր էր :

Կրկնելու հրաւեր , ծափահարութիւններ ու անվերջ ծաղկեփունջեր կը տեղային : Ըրջուն գոհարալիսներ կային թարսոնին մէջ . անոնցմէ գնեցին գեղեցիկ մանեակ մը փոքրիկ գոհարներով զարդարուած և աքամանդակուռ մատանի մը ու ինձ նուիրեցին : Վերջապէս՝ ոգեւորութիւնը անչափ էր :

Բանդիկեանը եկաւ ինձմէ ներդուրթիս խնդրելու :

— Ո՛չ , ես չեմ կենար այլ ևս չեմ ալ ուզեր որ դուք իմ պատճառաւ փնտսուիք : Գարուն մը կ'ուզէ վարձել թատրոնը , սուէք անոր . մտազիր է բերել Վարդողանի օրերիթի խումբը :

Այդպէս ալ եկաւ : Ցայով թատրոնը անոնց , մենք դուրս ելաք մէջէն :

Օրերերթի ժամանակ , ժողովուրդը ազատ էր քուլիսներուն մէջ մաս գալու : Գերասանները և ուճիք ծանօթութիւն հաստատեր էին զօրականներուն հետ , և շատ անգամ միասին կ'ընթրէին : Օրերերթի խմբին մէջ կային Պէնկլեան , Մնակեան , Թրեանց , Սանճար , Պէրպէրեան , ևն . Գերասանուէիք էին Գարաբաշ քչրբեր , Աղաւի , Չապել , և ուրիշներ :

Պոլիս գաւնալով՝ հաստատուեցայ Բերս : 1879ին , Չճիկեան գալով Պոլիս , պայմանաւորուեցաւ Աջամեանի , Ասողիկի և Սիրանոյշի հետ և ուղեւորուեցան Կովկաս :

1880ի փետրուարին աղջիկ մը ևս ունեցանք և կըքեցինք Արմենուհի անուամբ , երկու շաբաթ յետոյ՝ սաստիկ տկարացաւ երեխան : Անձնուիրաբար կը ինամէր տքթէ . Փեշտիմաճեան , որուն ծանօթակցեր էի Բերայի հրդեհի տարին : Երբ մայրս զիս քիչ մը տկար տեսներ , անմիջապէս անոր մօտ կը տանէր : Չկար դերասան մը կամ դերասանուհի մը որ անոր ինամքներէն զուրկ ըլլար : Ըստ շատերուս թէ՛ գիտութեամբ և թէ՛ դրամով օգնած է : Անոր մահուան դամբանակարը Իովորեանը խօսեցաւ , ըսելով՝ « Մարդասէր քրիստոսի մարդասէր զուակը մեռաւ այսօր » : Մեծ բազմութեամբ աղքատներ շրջապատած էին անոր դագաղը և կուլային :

Կայսեր խորհրդատու բժիշկն էր . Բաուֆ փաշայի հետ պիտի երթար գաղղիական ջրերը : Այդ պատճառաւ յանձնեց ամուսնոյս ամական երեսուն ոսկի հաշուով դրամ , բաժնելու համար իր աղքատներուն , որոնք արգէն կը ստանան եղեր ամէն ամիս հացի և տան վարձքի համար : Լարուստ չէր : Մեռած ժամանակը տեսնուեցաւ թէ՛ դրամ չունէր . իր անձը ապահովագրած էր որպէս զի իր գաւակներուն կարենայ փոքր գումար մը ձեռնել :

Հայ մարդ էր և հայ բանաստեղծ .
« Մի՛ անտ եքե՛ք սքով յուսահա՛ս »
Ի՞նչ կարէ անի՛ միակ մի անհաս .
Լէգեմք անի՛ զինուոր կը կազմեն .

երբ մէն մի մեղու չի դիտի ի վարդ ,
 Թողու հոգն այլու , փերակն այն աեծն
 Տես ի՛նչ կը կազմէ : Հա՛յ երիտասարդ ,
 Գու կարես լինել նայրեհեացդ շէմին՝
 Մի վիճ հիմնական , եւ Գեղուկ օտգիճն .
 Գու ըն նայրեհեացդ միայն պէտէ՛ն հոգա՛ն .
 Լեռանց սասորտը դու փոքրիկ անմարտ
 Մի հար ես միայն , եւ սասորտն իրական
 Պէտ՛ չունին Ռեզի , հա՛յ երիտասարդ :

Ա՛յո՛ , պայպէս կը հոստէր Փէշտիմալձեան ,
 և ինքն ալ ժրպան մեղուներէն էր :

1880ի աշնան Պ. Արգար Գովհանիսեանը
 եկաւ Պոլիս : Գալով ինձ այցելութեան , ծանոթացանք միմեանց : Հասաւ ինձ սպաւորութիւն թողոց վրաս : Պայմանաւորուեցաւ Գարաբաշ ջորիկերու և Մեակեանի Տեսուչի Գարաբաշի Գորակն :

1880-81ին Օրթագիւղը «սէզոն» մը ևս անցուցինք ընկերաբար , նոյն սիրով և նոյն պայմաններով , դարձեալ իմ առաջնորդութեամբս : Գերասաններն և դերասանուհիներն էին Թոսպատեան , Միտակ , Պէրպէրեան , Մատթէոսեան , Ալիքսանեան , Բերկիւլեան , Տիկ , Հէքիմեան , Օր , Հէքիմեան , Պ. Հէքիմեան , Ալիքթոր Համասանձեան , Աճաբոն Ատրուկի , և ուրիշներ :

Առանց ո և է միջադէպի՝ սիրով վերջացուցինք այդ «սէզոնն» ալ :

ԹԻ

1881ին Պոլիս եկաւ իշխան Ամատուկն , եփաւ մեր տունը այցելութեան , և ինդրեց որ ներկայացում մը տամ :

— Բայց ես խուճի չունիմ այժմ , իշխան , ոչ ալ թատրոն :

— Աշինչ , սիկին , ես կը վարձեմ թատրոնը , կը փակենք դռները , դուք կը ներկայացնէք Տամար :

— Հասաւ կը սխալեք , իշխան . ես մասնաւորի դերասանուհի չեմ : Այլ ինդիր է երբ կը յայտարարուի և բազմութիւն չըլլար . վերնատունը միայն կ'ըլլայ երկու կամ երեք հոգի . առ ինձ Տամար ժողովուրդ է , և չեմ պէտք է որ ներկայացնեմ :

— Հասաւ ի՛նչպէս կարող եմ գիտնալ ձեր ուժը : Ես ի՛նչպէս տանիմ ձեզ :

— Ես չեմ ինդրեր որ դիտ տանիք : Տարեք Մարի-Նուարդը :

— Տիկին , ինդրեմ , ճիշտն ըսէք . ո՛րն է ձեր «ամփոխուս» . մինչև այսօր չկրցի՛ն ճիշտ տեղեկութիւն ստանալ այդ մասին : Մէկը կ'ըսէ թէ դուք լաւ «սուպրէթ» էք , միւսը կ'ըսէ թէ դուք «էնժէնիւ-տրամաթիք էք , մէկ ուրիշը թէ առաջին գերեր . լաւ կը կատարէք : Այս հարցը ինձ համար հանելուկ մը դարձաւ :

— Իշխան , թող սուտէք ինձ լուծել այդ հանելուկը : «Ամփոխուս» չկայ , կարգեր կան , պէտք է այդ կարգերէն անցնել . ես այդ կերպով ալ անցայ այդ կարգերէն : Առաջ կատարեցի փոքրիկ աղջկան , հրեշտակի դեր , Լենյետայ «սուպրէթ» , յետոյ «կրիզէթ» , «էնժէնիւ» , «էնժէնիւ-տրամաթիք» . ամենէն թերթը՝ բացարձակ առաջին գեր : Վերջապէս ձեռն այն մարդիկ , որոնց տեղեկութիւն էք հարցուցեր , մէկը տեսեր է զիս «սուպրէթ» , միւսը՝ «էնժէնիւ» , ուրիշները՝ առաջին գերի մէջ : Մինչև «էնժէնիւ-տրամաթիք» անցեր եմ : Այժմ , եթէ կայ պակասութիւն , այդ պիտի ըլլայ առաջին գերի մէջ :

Իշխանը ինձ հետ համաձայն չէր . վերջապէս համոզեցի զայն քանի մը օրինակներով .

— Եթէ ես չեմ անցեր այդ գերերը գործնական դպրոցի մէջ , ի՛նչպէս պիտի կարողանամ ներկայացնել «Գամէլիազարդ սիկնոն» կամ «Քաթէրին Հովուարտի նման խաղեր : Գերասանուհի մը կ'երթայ ուրիշ քաղաք մը , իբր «տէպիւ» , կ'ընտրէ այդ կարգի խաղ մը , որուն մէջ ամփոփուած են բոլոր գերերը , ատող կարելի է չափել դերասանուհին , Եթէ ան բոլոր կարգերէն չէ անցեր և լոկ տրամաթիք դերասանուհի է , առաջին արարուածէն պիտի սկսի լալ . և դուք չպիտի ստանաք այն՝ ինչ որ պէտք էր ստանայիք : Կան դերասանուհիներ , որոնց կարողութիւնը չի ներեր «սուպրէթ» կամ «կրիզէթ» էն անդին անցնել , և անոնք կը մնան միշտ այդ գերերուն մէջ :

Վերջապէս՝ առաջարկեց 300 ռուպլի ամսական : Ես ուզեցի յիտուն փոլ իմփերիսալ , այն պայմանաւ որ Մարի-Նուարդին հետ ևս պայմանաւորուի : Իշխանը ինձ հաւատացուց թէ երեք հարուրդ ռուպլին կ'ընէ 50 իմփերիսալ : Ես գաղափար չունէի ռուպլի արժեքին վրայ , և խարսեցայ :

— Եթէ այդպէս է , իշխան , գրեցէք պայ-

մանակարի մէջ օրինակին մէջ 5) փոշ իմիջերիսլ
և միսին մէջ՝ 300 բուսլի :

Պայման էի դրեր որ երեք խաղ իմ իրա-
ւունքս է իբր «տէպիւ» տալ :

Իշխանը մեկնեցաւ : Ես ալ սկսայ պատրաս-
տութիւն տեսնել :

Այդ միջոցին, Աստղիկ Տիրեքէէր-Արասիի
փայտաշէն թատրոնին մէջ պիտի ներկայացնէր
Թուրքերէն լեզուաւ : «Քաթէրին Լոպուարտ» :
որուն մասին շատ էի լսեր՝ կովկաս երթալէն
ի վեր :

Տեսայ առաջին արարուածը միայն, և երբ
գացի մնա բարով ըսելու, Աստղիկ ինձ ըսաւ .

— Ըզնի՛ւ, կովկաս կ'երթամ, քեզ անկեղծ
խորհուրդ մը տամ : Հճամարձակուիս «Քաթէրին
Լոպուարտ» խաղալ : Ես անով Աստղիկ եղայ :
Գուն սարսափելի կը գլորուիս :

Այս խօսքերը շատ յանդուգն էին :

— Քանի որ այդպէս է, ես ալ կ'երթամ
անով քու աստղիկ խաւարեցնելու : Եթէ դուն
ինչպէր այդ խաղը չներկայացնել, առ ուրիշ
բան էր :

Եւ Տրաժեշտ տալով հեռացայ :

Երկրորդ օրն իսկ ձամբայս ելանք դէպ ի
կովկաս : Ինձ հետ էին Գարագաշ քոյրեր,
Մարի-Նուարդ, Մնակեան, Սանձաքձեան :

Հասանք Թիֆլիս թէ չէ, որդէն երեցաւ
որ պէտք էր հոսանքի հակառակ մաքառիլ :
Ժողովուրդը Աստղիկը կուգէ տեսնել, իսկ
«կովկաս»ը զժգոհութեան պատճառով հեռա-
ցուցեր է Աստղիկը և բերեր է Լըսչեանս :

Իշխանը կը խնդրէ .

— Չըլլայ որ «Քաթէրին Լոպուարտ» տաք
իբր «տէպիւ» : Ժողովուրդը արդէն գրգռուած
է, բողոքովն կը լարուի ձեզ դէմ :

— Իշխան, ես պայման եմ կապեր ձեզ
հետ, ինչ որ կը ցանկամ՝ այն կուտամ իբր
«տէպիւ» : Ես «Քաթէրին Լոպուարտ», պիտի տամ :

— Բայց, տիկին, մենք բերեր ենք ձեզ
Թիֆլիս, ամսական պիտի վճարենք, չենք ցան-
կար որ դուք տապալուիք :

— Տուրք թուղմ մը, այս լուպէիս կը ստո-
բարբամ, թող մեր պայմանադրութիւնը չեղեալ
համարուի : Բայց իբր «տէպիւ» կը ներկայացնեմ
«Քաթէրին Լոպուարտ» և այնպէս կը հեռանամ :
Իշխանը պայմանը ընչելու հաւանութիւն

չտուաւ, և նշանակեցին «Քաթէրին Լոպուարտ» :
Առաջին փորձին, իշխանը նստած կը սպասէ
որ ես փորձեմ ինչպէս որ հարկ է, բայց ես
կ'արտասանեմ շատ կամաց և կը փորձեմ հան-
դիստ :

Երկրորդ արարուածին, յանկարծ տեսեմ
դագաղ մը բերին բեմին վրայ : Իշխանը կը
ստիպէ զիս որ անպատճառ մտնեմ դագաղի մէջ
և այնպէս փորձեմ : Ես մերժեցի :

— Բայց, տիկին, չէ կարելի այդպէս,
պէտք է տեսնենք թէ ինչպէս դուրս կուգաք
դագաղէն կամ թէ ինչպէս կ'արձնուք :

— Իսկ եթէ լաւ դուրս չգամ դագաղէն
կամ լաւ չարթննամ, դուք ի՛նչ կարող էք
ընել ինձ :

— Մենք ձեզ ցոյց կուտանք թէ ինչպէս
պիտի կատարէք :

— Այն ատեն աւելորդ էր գալ Պոլիս :
Այստեղ կան օրիորդներ : Կարող էիք զանոնք
վարժեցնել և բեմ հանել այս դերերուն մէջ :

Երկրորդ օրը դերասանները լուր բերին թէ
առաջին երեք կարգ թափանքը բռնած են այն
անձինք որ որոշած էին զիս սուլել :

Կարող էք երեւակայել իմ գրութիւնս :
Ժողովուրդը զիս չի ձանձնար : Շատ կարելի է
ամենատառջին դերասանուհի եմ կամ թէ վեր-
ջինը, թող տեսէ զիս մէկ մը, եթէ արժանի
եմ՝ ծափահարէ, իսկ եթէ արժանի եմ սուլուե-
լու՝ թող սուլէ երկրորդ ներկայացման : Եթէ՛

«Քաթէրին Լոպուարտ»ի սեղ ուրիշ խաղ մը
ըլլար և զիս համեմատելին եւրոպացի կամ ուռս
դերասանուհիներու հետ՝ որոնց մասին գաղա-
փար անգամ չունէի, այն ատեն կարելի է
բողոքովին հեռանայի Թիֆլիսէն : Բայց զիս կը
համեմատելին Աստղիկին հետ : Պի՛ն եկեր էր

Աստղիկ Թիֆլիս, և ժողովուրդի սիրելին էր
գարձեր, ժողովուրդը չէր ուզեր որ անոր կա-
տարած դերը ուրիշ մը կատարէ : Արդ, Պոլսոյ
խումբին մէջ Աստղիկ կը կատարէր երկրորդ
դերեր, իր ամենամեծ դերերն եղեր են «Փա-
րիզու աղբատներ»ուն մէջ Ալիտայի գերը, և

«Կողպտուած փոստ»ի մէջ Ժաննայի գերը : Իսկ
«Քաթէրին Լոպուարտ»ի մէջ՝ Քենեանի դերը .
ըստ կովկասեցւոց՝ Աստղիկ պէտք էր կատարէր
Քաթէրինի դերը, իսկ ես՝ Քենեանիդը : Ես
Պոլիս ներկայացուցեր եմ այդ խաղը և կատա-

բեր եմ քաթէրինի դերը . Աստղիկ եթէ ուզեր իմ ըրածս կրկնել , ինչքան ալ նմանցնէր . չէր կրնար յաջողիլ իմ ըմբռնած կերպովս խաղալու : Այս մտածումն էր ինձ ուժ տուողը : Եթէ այս մարդիկը , կ'ըսէի ինքնիրենս , չպիտի կարողանան զանազանել մայրը մորուէն , այն ատեն արդէն աւելորդ էր այստեղ ներկայացում տալ :

— Դուք պէտք է ներկայացումէն առաջ խմբագրատունները երթաք , կ'ըսէին ինձ :

— Ես անաշառ քննադատութիւն կը ցանկամ . «տեպիւ»-ն առաջ ո՛չ մէկուն հետ չեմ ուզեր երթալ ծանօթանալ :

Հասաւ ներկայացման իրիկունը : Դերասանուհիները սենեակս գալով ձեռքերինի սրտիս վրայ կը դնէին .

— Զարմանալի՛ բան , կ'ըսէին , այս կինը չի վահնար :

Ճիշտ ըսելով , այդ բոլորէն ես կ'արհամարհէի Հասարակութիւնը , ինքնիրենս կրկնելով .

— Ի՛նչ գազաններ են առաջ , զիս սաստիկ կը յուզեն , չեն ձգեր որ հանգիստ դերիս վրայ մտածեմ :

Եթէ քիչ մը վսի գգայի , ահա այն ատեն դատու կորսնցուցած էի . վա՛յ անոր , որ , նոյն իսկ եթէ ունի համաձայն իր մէջ , քաջութիւն չզգար կուռելու .

Բեմ ելայ թէ չէ՝ ծափահարեցին : Առաջին արարուածին վերջը՝ շատ փոքր ծափահարութիւն ստացայ :

Երկրորդ արարուածի գերեզմանի տեսարանին , դազադէն ինչելով , մինակ , ծուր դրած՝ կ'աղօթէի , լսելով իմէլիուտի ձայնը որ զիս կը կանչէր . «Քաթէրի՛ն» , ես ինքզնիցս մոռցայ , և փոխանակ ըսելու՝ «Աստու՛հ եմ» , ըսի՝ «Հոս եմ» : Երկրորդ անգամ կանչեց՝ «Քաթէրի՛ն» . ա՛յ ես չստի իմ՝ «Հոս»ս և կրկնեցի՝ «Հոս եմ» .

Յաջորդ օրուան թերթերէն մէկուն մէջ կար յօդուած մը այսպիսի բովանդակութեամբ . «Այժմ կը հասկնանք թէ պոլսեցիին՝ «Հոս» բառը ստեղծե՛ր եւ միմիայն «Քաթէրին» չովուարտ»-ի գերեզմանի տեսարանին համար : Այս գերեզմաննոցին մեռելային խորութեանը մէջ ա՛յնքան ազգու էր այդ «Հոս»ը : »

Երկրորդ արարուածի վերջը՝ քիչ մը աւելի էր ծափահարութիւնը : Իսկ երրորդին , երբ գահը բարձրանալով լսեցի իմէլիուտի ձայնը ,

գարծուցի գլուխ՝ սարսափած՝ դէպ ի այն կողմը ուրկէ ձայնը եկեր էր , ստուգելու համար թէ չե՛մ երագեր , ուրուական չէ՞ , ահա այն ատեն լսեցի որ առաջին կարգերուն մէջ կ'ըսէին .

— Մենք չենք կարող սուշել ստիկա , ետ առեք սուլիշները :

Այդ բոլորէն՝ ծափահարութիւնը տեսեց անուագն ստար վայրկեան , ժողովուրդը կը ցանկար որ ես գլուխ տայի : Բայց ես չէի կարող , դիմախաղը կը կորչէր : Իշխանը դրսէն եկաւ քուլիս .

— Տիկի՛ն , կ'ըսէր , գլուխ տուէք , այդպէս չէ կարելի :

Տեսնելով որ ձար չկայ , թողնելով դերս՝ դէպ ի քուլիսը պատասխանեցի .

— Պէտք է ժողովուրդը սովորի . այս միջոցին դերասարը չի կրնար գլուխ տալ , և պէտք չէ զինքը խանգարել :

Դառնալով ժողովրդին՝ սառն պլուխ տուի : Արագօրէր փակուելէն յետոյ՝ չեմ գիտար քանի անգամ զիս կանչեց ժողովուրդը :

Մեր բոլորիս սիրելի Առնուկեանցը ներս գալով .

— Կեցցէ՛ք , սիկի՛ն , ըսաւ , մենք չէինք կարծեր :

Իշխան Ամատունիին նուիրեցին պսակ մը , ան ալ բեմի վրայ գլուխս անցուց : «Ներկայացումէն յետոյ , ժողովուրդը խռնուած էր դրան առջև , և «կեցցէ՛ն»երով զիս ձանապարհ դրաւ դէպ ի տուն :

Երկրորդ ներկայացումը ըլլալու էր Մարի-Նուարդին «տեպիւ» , «Սէր ստանց համարման» , Մէկ քանի հօգի յոյսերնին դրեր էին այդ ներկայացման վրայ . կ'ուզէին Նուարդով զիս տապալել : Բայց չյարձողեցան : Ժողովուրդը շատ քիչ կար :

Երրորդն էր «Մայրական Սէր» , այդ ներկայացման ստացայ թարգմանչի կողմէն ազամանեղեայ ապարանջան :

Սխոտ՝ որ այդ ժամանակուան թերթերէն ոչ մէկը պահած եմ :

Ապա ներկայացուցինք «Քոյր Թերեզա» , Լրագիրները գովեստով խօսեցան իմ մասին : Բայց այդ գովեստները ինձ համար կարեւորութիւն չունէին . «Լրաշարի կատարեց , հիացուց հանդիսականները» , ևն . ինձ համար

կարևոր էր արհեստական քննադատութիւն:

"Քոյր Թէրէզայ"ի առթիւ Աքնօթակի մէջ գտայ յօդուած մը ուր կար քննադատութիւն: Բայց քննադատը սխալ ճանապարհ էր ցոյց տուեր: Աւր ի վերջ կը յիշեմ որ գրողը մէն մի տեսարանի Տամար գովեստներ ընելէ յետոյ՝ „Տիկնոջ խաղի ամէն մէկ պատկերը սալօններ կարող էր զարդարիլ." ևն. կ'ըսէր՝ "Բայց չենք գիտեր թէ ինչո՞ւ տիկինը գոհեց քոյրը մօրը, մինչդեռ պէտք էր մայրը գոհուեր քոյրը:"

Յաջորդ օրը, Պ. քննադատը իր մէկ ընկերոջ Տեա եկան ինձ մօտ: Բարեկեցին ինձ Ես սխալ ծիծաղիլ:

Պարոնը իր բարեկամին ըսաւ .

— Ես չըսի՞ թէ տիկինը կը ցանկայ որ ոչ մէկ բիծ ցոյց չտան իր խաղի վրայ, և շարունակ գովեն զիջքը:

— Ա՛չ, պարոն, պատասխանեցի. ներեցէք ինձ. ես կը սիրեմ քննադատութիւնը, բայց պէտք է լուրջ ըլլայ: Ես ութն օր, ութը գիշեր խաղը ձեռքս աշխատեր, սիրտս մաշեցուցեր եմ թէ ո՞րը պէտք է գոհուի. ես գիտեմ թէ քոյրը պիտի գոհուի՝ ըստ Տեղիտակին: Ա՛հա՛ խաղը: Հեղինակը դերեր է քոյր ճուղեփոխի բերանը սա խօսքերը .

— Բայց դուք միանձնուհեաց գայթակղութեան պատճառ կը դառնաք:

— Ես ոչ մէկուն բան մը չեմ ըսած, և անիկա բան մը չգիտեր ուսկից կ'եղբակացնէ այդ խօսքերը: Եւ վերջապէս եթէ կար գիտար կէտ մը, որու վրայ շատ եմ աշխատեր, այդ այն կէտն էր որ քոյրի պեստներուն մէջ պէտք էր մայրը պատկերացնել դէմքին վրայ: Մայրը յուսմունքէն մահամեծ է. ատիկա խայտառկութիւն է քոյրին Տամար: Հասաւ ինչո՞ւ չի կրնար յաղթել մահՏուան: Բնական օրէնքին պէտք է պուխ ծնենք: Երբ վախ կը զգանք, առանց ուզելու մեր գոյնը կը փոխուի:

— Ես չեմ լսեր քոյր ճուղեփոխի խօսքերը: Այդ միջոցին բարեկամիս մէկը զիս պիւֆէն Տրաւիբեց դաւած մը քոնեաք խմելու. կ'երևալ թէ այդ պարծառու չեմ լսեր:

— Այո՛, դուք մէկ պաւաթ քոնեաքով կը փշէք մեր ութ օրուան աշխատանքին վրայ և կը փնացնէք զայն: Եթէ կ'ուզէք քննադատութիւն գրել, ուսումնասիրեցէք խաղը այնպէս ինչպէս ես կ'ուսումնասիրեմ: Դուք, առաջին



ՏԻԿԻՆ ԼՐԱՅԻԱՅ

(Քոյր Թէրէզա, 1882, Կովկաս)

քննադատներ, էն մէկը, այն ատեն դերասանի շտեմարը կարող կ'ըլլաք տեսնել և ուղղել պաւսիկա: Երբէք կարելի չէ քննադատութիւն գրել այդպէս. "Հրաշալի կատարեց, կամ վատ կատարեց": Ա՛չ, պէտք է արարուած առ արարուած Տեսնել և ցոյց տալ դերերու բնաւորութիւնները: Այն ատեն դերասանն ալ կարող է իմանալ որ դուք գիտակցութեամբ կը գրէք ձեր քննադատութիւնը:

— Բայց, տիկին, այն ատեն գտնէ երկու օր պէտք է քննադատութիւն մը գրելու Տամար Այն օրէն յետոյ այդ պարոնը ոչ մէկ քննադատութիւն գրեց, զգալով որ ծանր է քննադատի պաշտօնը և պէտք է աշխատի երկու օր: Երանի՛ յանձն առնէր այդ աշխատութիւնը: Կարող էր օգտակար ըլլալ դերասաններուս: Բիւ յետոյ, իշխան Ամատունիին և իմ յարարերութիւններս աւրուեցան: Իշխանը զիս

չէր ճանչցած : Խնդիրը մինչև այն աստիճան հասաւ որ ժողովուրդը միջամտեց : Պ. Վահրամ Մուլթաֆեանց, ազնիւ երիտասարդը , որ արդէն քովթէկն անդամներէն էր , իշխանին պաշտօնն ստանձնեց բեմի վրայ :

Յետոյ զերասանները գրեցին թուղթ մը իշխանին . «Մենք ձեզ հետ պայման կըքեր ենք . եթէ դուք չըլլաք , բոլորս ալ կը դադրինք գործելէն» :

Իշխանը կրկին եկաւ տեսարան : Բայց իմ իշխան Պ. Մուլթաֆեանն էր . անկից կը ստանայի ամահաններս և ինչ որ պէտք էր իրեն կըքէի :

Ժ.

Պիտի ներկայացնէինք « Խեբքից պատուհաս » , որու մէջ պիտի կատարէի օրերդի մը դերը , զոր նախընթաց տարիները կատարեր էր Սերմուշ : Այդ խաղը մեծ պատրաստութեամբ եւ հաներ բեմ՝ չեմ գիտեր քանի անգամ փորձելով : Այժմ այդ գերը եւ պիտի կատարէի՝ միայն երկու փորձով : Բայց այդ օրերը Արմենուհի ազդիկա շատ տկար էր , և բժիշկները յոյս չէին տար : Զաւակի քովը նստած , կուլայի :

Յանկարծ տեսայ որ ստաը թոպէ ուշացեր եմ փորձին : Խեղճ կառք նստայ և հասայ թատրոն , աչքերս ուռած և կարմրած :

Քաւորդ ժամ մը հազիւ ուշացեր էի , բայց արդէն առաջին արարուածը փորձեր և երկրորդն էին սկսեր :

Խնդրեցի դադրեցնել փորձը և նորէն սկսիլ Պ. Չմշկեան , որուն զեռ ծանօթ չէի , հրամայեց որ շարունակեն փորձը : Այն ատեն յայտարարեցի թէ՛

— Ես չեմ ներկայացներ եթէ նորէն չփորձէք : Ուշացեր եմ քաւորդ մը . հինգ թոպէն իմ իրաւունքս է , տաը թոպէի համար ալ կարող էք սուգանք նշանակել :

Վերջապէս եկան քովթէկի անդամներէն մէկ քանի պարոններ և սխտը փորձել առաջին արարուածէն :

Ներկայացման իրիկունը , իշխանը պատրաստեր էր ապարանջան մը տիկին Չմշկեանի համար :

Երկրորդ թէ երրորդ արարուածը վերջա՛նայուն , ժողովուրդը սաստիկ կը ծափահարէր և կը պոռար՝ « Լրաշեյ » :

Չիս կանչեց Սարգսրեանը (բեմայարդար) : Գացի բեմ , տեսայ Պ. և տիկին Չմշկեանը որ ձեռք ձեռքի բռնած կը սպասեն որ ես գամ , ձեռքէս բռնեն և իմ անուամբ ստանան ապարանջանը :

Այդ որ տեսայ , ես դարձայ , սենեակիս նիգը դրի և նստայ : Ժողովուրդը շարունակ կը ծափահարէր , « Լրաշեյ » պոռալով : Բայց անոնք չէին համարձակեր վարագոյրը բանալ , քանի որ զիս կը կանչէր ժողովուրդը . եթէ ես առանձին բեմ ելլէի , հապա ի՛նչպէս իրենք ստանային ապարանջանը :

Վերջապէս , կէս ժամ պոչ դրութեան մէջ կենալով , չկարողացան բեմէն ստանալ ապարանջանը և գայն ստացան իրենց զարգասնեակին մէջ :

Չմշկեան , բարկացած կը պոռար .

— Այ՛ն , ինչդ ժողովուրդ , երեք հարիւրներ սուէք , ի տես հրախիրեցէք , պատուեցէք , և անոնք ձեզ անպատուէն :

— Պ. Չմշկեան , մի՛ մոռնաք որ ազգասիրաբար խաբուած ենք : Յիսուն փոջ իմիգերիայի տեղ կը ստանանք 300 թոպիլ :

Նպաստիս նախընթաց օրը , յօղուած մը լոյս տեսա « Չմշկեան » ստորագրութեամբ , չեմ յիշեր Աբշեմուի թէ Մեղրտի մէջ . « Քանդեցէք , քանդեցէք ձեր տունը , պարոն թատերասէլներ . կը լսենք որ Լրաշեյի նպաստի համար դրամ կը ժողվեն : Քանդուցէք , լեցուցէք անոնց բոլպանը , որպէս զի վաղը երթալով Պոլիս՝ իրենց հոսոս եղբայրներուն մօտ ծաղրեն ձեզ և ծիծաղեն ձեր վրայ » :

Բայց այդ յօլուածը՝ փոխանակ ինձ վնասելու՝ կարծեք զբոլոց ժողովուրդը :

Ես կ'ուզեմ որքան կարելի է քիչ խօսիմ այդ մասին : Թատրոնէն մինչև մեր տան առաջ (Սալտաստիկ պապար) յաղթական կամարներով զարդարեր էին : Թատրոնի օթեակները դափնեայ պսակներու մէջ առնուած էին : Մեծ ընդունելութիւն , շատ ընծաներ :

Ամենաթանկագին նուէրներէս մէկն էր Գամառ-Քաթիկայի հատորը , ընթացական ուսումնարանի աշակերտներէն սրուած , ճօր թաւշեայ

կազմով . կազմի վրայ կար ծիծեռնակ մը ոսկիէ, բերանը բռնած ունէր նամակ մը, որուն վրայ գրուած էր . “Մեր սիրելի տաղանդաւոր գերասանահայրն՝ քոյրիկ Հարաչայինն” : Մէջը կար յիսուէն ւեղի ուսանողներու ստորագրութիւն : Նշնպէս ստացայ ոռւս լեզուաւ ստանաւոր մը՝ Նէվզիքի ստորագրութեամբ :

Ստացայ պակ մը որու մէջտեղէն կախուած էր ստանաւոր մը .

« Այսօր ամեն միացեմք
Վարուած օհրովն քանարից ,
Գոյնն քանքնն միաբերոմ՝
Նկեցն՝ օրս , զա՛րդ բաւերից .
Այսօր ամէն մի ուսանող
Առաքելով ինչ « կեցցէ » ,
Իւր յարգանաց փոխարէն
Այս պրտար նրկիտ :
Գե՛հ , ընդունի՛ր դու մեզից ,
Թէևն մեզ է մեր բնամ ,
Բայց բղիթած մա մեր սրտից ,
Եւ յարգանաց է նրան :

Տփսիսաւ կիսափական զինաղիոցի նայ ստանդոներից ,
1882 , 28 յունվարի : »

Ներկայացումէն յետոյ , զարգարբեր էին բազմաթիւ մը գափնեայ տերեւներով , և բերելով բեմի մուտքին առջևը , կ'ուզէին զիս հոն նստեցնել :

Ես լսելով այդ պատրաստուած բազմաթիւ մասին , հեռացայ հակուած կողմէն : Այնտեղէն ալ՝ ժողովուրդը , զիս բարձրացնելով , նստեցուց շքեղ բաց կաւքի մը մէջ :

Վերջապէս՝ արք և կանայք , ծեբք և մանկուհիք զիս հասցուցին տունս պէնկալեան կրակներով « կեցցէ » ներով :

Բարձրացայ պատշգամբ : Ժողովուրդը շէր ուզեր ցրուիլ : Յայտնեցի շնորհակալութիւնս և խնդրեցի որ իրենց մէջէն կազմեն պատգամաւորութիւն , ես ալ գանձեք մէկ մէկ բաժան թէյով հիւրասիրելով յայտնեմ զգացումներս :

Այն գիշերը՝ յոգնած՝ մէկ կերպ անցուցի : Չեմ գիտեր որքան ժամանակ էր անցեր , երբ օր մը եկան ինձ ըսելու յառաջիկայ ներկայացման մասին որ Վարդանանց սօսի աւթի տեղի պիտի ունենար :

— Քեզ պիտի սուլեն , և արդէն կողովելով կազմար , ևն . ես պատրաստեմ թատրոնին մէջ ծաղկեփունջի տեղ նետելու համար :

Ես զորմացայ թէ ինչու զիս այդքան բար-

ձըրացուցին և ինչու՞ այժմ կ'ուզեն գետին դարնել :

Վնասին կը խնդրէր որ դառնանք Պոլիս և չմանակցիմ որչ ներկայացման :

— Այդ անկարելի է , Մնտն , անոնք զիս կայարանին մէջն ալ կարող են խայտառակել : Գիտասաններէն ոմանք ուրախ էին այդ աւթիլու և ժամանակէն առաջ թատրոն էին գացեր : Ես քիչ մը ուշացայ . և երբ ներս մտայ դռնէն , պատահեցայ նրբանցքին մէջ ուսանող Պ. Մուրթեանին : Յաւ յայտնեցի թէ մինչև այդ օրը ուսանողութիւնը չէ պատուեր զիս պատգամաւորութեամբ մը , որպէս զի կարողմայի շնորհակալութիւնս յայտնել .

— Ի՛նչպէս , տիկին , մենք լսեր ենք որ դուք մեզ դեմ դժգոհ ըլլալով , ըսեր էք . “ Թքեր եմ ուսանողութեան վրայ ” :

— Եւ դուք չէ՞ք կրցեր հասկնալ որ ատիկա թշնամութեամբ սաքըուած զրպարտութիւն է : Ատոնք գերասանական էնթրիկներ են :

Ու մնաք բարով ըսելով , գացի տեսարան : Այդ օրը պիտի արտասանէի Գամառ-Քութիպայէն կտոր մը : Ընկերներս քուլիսներուն մէջ պատրաստուէր էին տեսնելու թէ ուսանողութիւնը ի՛նչպէս զիս պիտի ողջունէր կազմարներով :

Չեմ գիտեր ի՛նչ հրաշք էր . բեմ ելած ատենս՝ այդ կազմարները ծաղկի և ուսանողաց գլխարկներու փոխուեցան :

Վերջապէս , ինն ամսուս “ սեզոն » ււարտեցինք և գարնանք Պոլիս :

Բայց իմ առողջութիւնս լաւ չէր : Արդէն կողորդէս արիւն էր հոսեր անգամ մը :

Փէշտիմալճեան արգիլեց ինձ բեմ ելլել : Ձրկուեցայ բեմէն , բեմն ալ ինձմէ զըրկուեցաւ :

Ո՞վ էր մեղաւորը : Հայ հասարակութիւնը : Եթէ ան ժամանակին զիս ուղարկած ըլլար արտասահման՝ գէթ վեց ամուսնու համար , ես շատ շուտ ձեռք պիտի բերէի այն ինչ որ տասը տարուան ուժ սպասելով ինքնօգնութեամբ եմ ձեռք բերեր :

Այո՛ , մեր ձեռքէն չեն բռներ , ուզեր են որ ազգասիրաբար քիչ ոռճիկ ընդունինք , բայց ազգասիրաբար չեն նայած մեր զգեստներուն վրայ , պահանջած են որ մեր զգեստները ըլլան

մետարսէ, որպէս զի անոնց խորոցը մինչև Տասարեակթեան սկանչը հասնի:

ժԱ:

1883 յունուար 30ին ունեցանք մանչ գրասկ մը. Ըօւշեցի Սահակ Լարիսեան եղաւ կըքտ-հայր, և անունը զրինք Հայի:

Ելոյ թուականէն քանի մը ամիս յետոյ դէպք մը պատահեցաւ: Թէև այդ դէպքը բնմի հետ կապ չունի, բայց կենսաբն այն յիշատակներէն է որ խորապէս տպաւորուած են սրտիս մէջ:

Գիշեր մը, ամուսինս ու ես Փերայէն դաւաթիս կ'երթայինք՝ Մաղաքեանին տեսութեան: Բերայի մէջ կան կարմիր լապտերներով գար դարուած առններ... Պալըք-Փապար փողոցէն անցած առննիս, տեսաւ որ կարմիր լապտերու արտն մը առ ձև կանգնած էր սիրուն հայ մարդ մը, երկար հասակով, սպիտակ կարծ շարժար հագած, երկար կարմիր գօտին մէջքը պլլած: Ֆէսին վրայ շալմա, ունէր փաթթած, ոտքերը՝ սպիտակ կարծ գուլպաներ որ կարմիր կապերով բռնուած էին: Հագած էր նոր մուշակ, իսկ ձեռքը բռնած ունէր գաշտն մը: Ստեքովիզ կը զարնէր այդ զրան, ու կը հայհոյէր:

— Բացէք, կը պուրս. թէ չէ կը կտարեմ: Են իմ ձեռքէս չ'ազատիր:

Ամուսնէս բաժնուելով անմիջապէս անոր մօտը գացի և ձեռքը բռնելով:

— Ելա՛յր, ըսի, օգնէ՛ ինծի, մինակ եմ, կը վախճամ, դաւաթիս պիտի երթնամ, եղի՛ր ինձ երայր և ընկերայցի:

— Ի՛նչպէս, քոյրիկ. դուն լայնէ կ'ընես ինձ հետ խօսելու: Աչքիս վրայ, ես քեզ կը հասցնեմ տեղը:

Հարունակելով մեր խօսակցութիւնը, ծամբայ ընկանք: Ամուսինս ալ մեր ետևէն կուգար: — Քոյրիկ, քանի Պոլիս եմ եկեր, ոչ մէկ հայ կին լայնէ չէ ըրեր հետս ընտանեկար խօսելու, ոչ մէկը ինծի՝ «եղայր», չէ ըսեր:

- Անունդ ի՛նչ է:
- Պետրոս ծառայ:
- Քաւ լիցի: Ո՞րտեղացի ես:
- Մշեցի:
- Ո՞րտեղ կը ծառայես:

— Մաքսատան մշակներէն եմ, և տանապետ:

— Ամուսնացած ես:

— Քոյրիկ, ես քո հոգուն մատաղ, այն: Էս երեսուն տարեկան եմ, տանհինգ տարիէ ի վեր ամուսնացած: Տանընչորս տարի է Պոլիս կը գտնուիմ:

— Պետրոս, եղբայրս, թոյլ տուր ինձ քեզ յանդիմանել, Մուշ գտնուող քրոջս փոխարէն: Ի՛նչ գործ ունէիր այդ զրան առջև դաշտնը ձեռքդ: Ամօթ չէ՞՞ քեզի: Ախտս չէ՞՞ քրոջս: Էս միտակ չեմ, ահա ամուսինս, ծանօթացիր: Էս մտեցայ, որպէս զի թէ՛ խալտառակութենէ և թէ՛ վտանգէ քեզ ազատեմ:

Պետրոս ծանօթացաւ ամուսնոյս. յետոյ, սկսաւ հեծելաւարով լալ:

— Ներէ՛, քոյրիկ, ներէ՛, եղբայր. եթէ ես ունենայի առաջուց այսպիսի քրոյրիկ, չէի փձանար: Կը խոտատեամ վաղը գրեւ, բերել տալ կինս, վարձել փոքրիկ սենեակ մը և ապրիլ անոր հետ:

— Անցցես, Պետրոս, կեցցես, եղբայրս. իմ տունս Հայոց եկեղեցւոյ փողոցը. թիւ 13. Երբ բանի մը պէտք ունենաս, եկաւ գաիր զիս Հասանք Մաղաքեանի զրան առջև: Պետրոս քանի մը անգամ ձեռքը կուրծքին զարնելով շնորհակալութիւն յայտնեց և հեռացաւ:

Քիչ ժամանակ յետոյ, Հայերս պիտի ընտրէինք Ամենայն Հայոց Աթողիկոս: Ելոյ ընտրութիւնը 1884ին էր: Լսեցինք թէ գրամով քուէ կ'աւուտէին ու կը ծախէին:

Ե՛րբ ապր սահմանագրութիւն ունէր, բայց դեռ ժողովուրդը պատրաստուած չէր իբր սահմանագրական ապրելու: Այնպէս որ անիկա կրկին կը կտաւաբաւուրէ ամիրայական ձեռով: Կը բերէին թուղթ մը. «ստորագրէ՛» այստեղ կ'ըսէին անոնք ալ առանց գիտնալու թէ ինչ կ'ընեն՝ կը ստորագրէին քուէթուղթը: Գիտակցութիւն ունեցողներն ալ կը ծախէին իրենց քուէն:

Այժ, սահմանագրութիւնը մեր ժողովուրդի ձեռքը այն էր ինչ որ է սուրբ հինգ տարեկան երախայի ձեռքը:

- Պէտք էր պատրաստել ժողովուրդը:
- Գացի մաքսատուն, գտայ Պետրոսը, հրաւիրեցի մեր տունը. եկաւ:
- Պետրոս, ըսի, դուք միշտ կը կրկնէք

Թէ «Մենք Լուսուորչայ ոչխորներն ենք, այնպէս չէ՛: լա՛ւ, գիտեք ի՛նչ ըսել է այդ խօսքը՝ այսինքն Լուսուորչայ զուրպաններ ենք, անոր գորքին մեռնիմ: Թող ան մեզ զուրպան ընէ: Այդ Լուսուորչայ ամթուր էլմիածին է: Ըյնտեղ նստողը Լուսուորչայ փոխանորդն է: Այժմ թափուր ի՛է այն գահը: Երեսփոխանք պիտի ընտրեն այդ գահին արժանաւոր փոխանորդ: Փոխանորդողը կը կոչենք կամոզդիկոս:

Յետոյ Հասկցուցի իրեն թէ ի՛նչ է սահմանագրութիւնը և թէ ի՛նչ փնաներ կը Հասցնէ մեզի մեր ժողովրդին տգիտութիւնը և անտարբերութիւնը դէպ ի քուէտուսիք:

— Պետրոս, ըսի ի վերջը, ինծի մի՛ Հարցըներ թէ ո՞վ կ'ուզեմ կամոզդիկոս տեսնել: Այժմ գնա՛, ինչպէս որ ես քեզ Հասկցուցի, դուն ալ պատրաստէ՛ ընկերներդ: Քեզ տեսնեմ, Պետրոս, գործդ պիտի ձգես, թէ՛ մարտասան մէջ և թէ՛ պանդոզները՝ պիտի Հասկցնես բոլոր ծանօթներուդ, և պիտի պատրաստես գանձոք: Քուէարկութեան միջոցին, մեծ բազմութեամբ պիտի գտնուիք եկեղեցին, պիտի Տակէք քուէտուսիկն որպէս զի գեղծում չգործուի:

Հասաւ Համագումարի օրը:

Պետրոս եկաւ ինձ ըսելու թէ իրենց փափաքածն էր Ներսէս Վարժապետեան: Իմ ընտրելիս ալ Վարժապետեանն էր:

Գացիք Գում-Քափուրի Մայր-եկեղեցին ուր ըլլալու էր քուէարկութիւնը:

Ժողովրդին ընտրեալ գասակարպը Հրաւիրուած էր դասը: Երեսփոխանք և եպիսկոպոսունք եկեղեցոյ մէջտեղը նստած էին, և մեծ շրջանակով մը փակել տուած էին ստեանը:

Եկեղեցոյ բակը և մուտքին առջև Հազարաւոր ժողովուրդ կար: Գուռը չէին բանար:

— Ի՛նչպէս ընենք, կը Հարցնէին:

— Կոտրեցէ՛ք դռները, մեր եկեղեցին ժողովրդական է: Անոնք իրաւունք չունին ձեր դէմ դռները փակելու:

Ըսի այս խօսքերը և բարձրացայ գրասեղանի մը վրայ:

Ժողովուրդը սոսկալի կերպով ողևորուեցաւ և սխաւ խմբուի վանդակափեղով դրան առջև:

Ժողովուրդը իր մէջէն պատգամաւորութիւն ընտրեց, մտաւ շրջանակին մէջ, և Հսկեց քուէտուսիկն վրայ:

Պետրոս տարաւ յաղթանակը:

Վարժապետեան ընտրուեցաւ: Այդ առթիւ թղթակցութիւն մը կար Մեշա Հոյսեօպօլի մէջ, ուր ըսուած էր թէ «Կուսպաններու սիրուհի կին մը կ'առաջնորդէր ժողովրդին»:

Այդ «կուսպաններու սիրուհի», ես էի:

Փ Յ Ց:

Վանուսին օսմանեան ծխախոտի րեժիմն մտաւ ծառայութեան, և տեղափոխուեցանք Գափալա: Ծովափը կար պանդոկ մը, որու անունն էր Պէլլիւ: Այդ պանդոկը դասարկել տալով՝ Հաստատուեցանք այնտեղ:

Երջանիկ էի: Հատ կը սիրէի ամուսինս, ու կը սիրուէի անկից: Ձուակներս առողջ էին: Իմ առողջութիւնս ալ ՀետզՏեաէ կը լուսանար: Գիշեր մը, ամուսինս և ես նստած էինք պատշգամը:

Երկինքը պայծառ էր, և լուսնի տանուհիսը: Յպիստիկ ծովի սպիտակ ջուրը կարծէք միակտուր գոհՏարի էր փոխուել:

Հիացած կը նայէիք Տեռուն, շատ հեռուն: Յանկարծ դարձայ ամուսնոյս շնորհակալութիւն յայտնեցի:

— Այդ ինչո՞ւ Համար, Ազնի՛ւ:

— Անոր Համար որ ես երջանիկ եմ Վըսեն թէ երջանիկ մարդոց շապիկը դեղ է դժբաղդներուն, բայց թէ երջանիկ մարդ գտնել կարելի չէ: Ես երջանիկ եմ: Աւրեմ ճարուած է դեղը:

— Գուն քեզ աչք կուտաս: Այնքան կ'ըսես որ վերջապէս դժբաղդութիւն մը կը պատահի: Աւրախ տրամադրութեամբ քաշուեցանք մեր սենեակը:

Դէս գիշերէն յետոյ, երպիս մէջ տեսայ սիրելի մայրս:

— Ազնի՛ւ, ըսաւ, ինչո՞ւ ես քնացեր:

Հայկդ թիֆէ բռնուած է:

Յանկարծ արթնացայ:

— Անտո՛ն, ելի՛ր, մայրիկս երազիս մէջ ինձ ըսաւ թէ Հայկը թիֆէ բռնուած է. ճրագը վառէ՛, երթում զաւակս տեսնեմ:

— Քնացի՛ր. ի սէր Աստուծոյ, ինչե՛ր կը Տնարես:

Գացի քոզի սենեակը: Վարձկան կինը կը

խուկար, իսկ որդիս՝ սաստիկ տաքութեան մէջ՝ կը դառնոցէր :

Անտանիկի տանջանքներ կրելով մէկ ամիսն անցուցինք :

Բժիշկն ըստ .

— Այժմ երբտես ազատած է, բայց դեռ թոյլ է : Այստեղ օդը չ'օգտնուի . և անիկա կրնայ նորէն տկարանալ ուրիշ հիւանդութեամբ մը :

Ա՛լ մտոյ անկարելի էր : Յաջորդ առաւօտն իսկ ձամբայ կ'ընէր :

Պոլիս հասայ թէ չէ՞ ես ալ տկարացայ : Փէշտմարձեան եկաւ և յայտնեց ինձ թէ ջերմ ունիմ, այն ալ գէշ տեսակէն :

Այդ օրը, ամուսինս, տխուր արամազրութեամբ կրթալով բէժի, մոռցեր է թանկագին իրերը հետը տանիլ զբամարկի մէջ պահելու : Պիտի ձաշէր ուրիշի մտա : Մեր տան ծառայողները ինձ հետ Պոլիս էին դարձած : Նոյն օրն իսկ, Գափալայի մեր տունը գողեր մանկով տարեր են ամէն բան, թանկագին սպարանջաններ, օղեր, գոհարեղէններ, արձաթեղէններ, ինչպէս և ինձ նուրս արուած Գամառ-Քամիպոյն : Հետո ունեի ժամացոյց մը շղթայով և ապարանջան մը : Արեւ ոչ մէկ յիշատակ չէր մնացեր ժողովրդէն . բոլորը կողպուտեր էին :

Քանի մը ամսէն ամուսինս ալ տեղափոխուեցաւ Պոլիս . և հաստատուեցանք Փերս :

Սառա-Պէրնար 1890ին պիտի գար Պոլիս և պիտի տար շաբթ մը ներակայացուեմք : Այդ ուրը յեւելով, ես զիս գէշ դրացի : Կը կարծէի թէ ինչպէս Քրիստոս տաճարը մտնելով դուրս էր ըրնր Փարիսեցիները, նոյնը պիտի պատահէր ինձի, ևս ինքզինքս դուրս պիտի վանէի թատրոնէն : Հատ էի լսեր Սառայի մտախն : Հատ անգամ պատմեր էին թէ անիկա Մարկիթիս Վոթիէի դերին մէջ, առաջին արարուածին բեմ կ'երևայ՝ գէր կրիտասարգ կ'էն, և հետզհետէ նիհարանալով վերջին արարուածին կը դառնայ կմախք մը :

Ես կը զարմանայի որ եթէ ան վեր է, ի՞նչպէս կարող է մարմինը նիհարացնել, ինչ որ կ'ըսէին՝ չէի հասկնար : Հատ կ'ուզէի տեսնել : Եւ հիմա որ առիթը պիտի ներկայանար, կը վախնայի, զիս գէշ կը գրայի :

Ազգարարութիւնները փակուցած էին պատերու զրայ : Ազգարարութեանց վրայ գծուած

եր անձոննի գլուխ մը, կրնամ ըսել՝ ճիւղի դէմք մը, տակն ալ գրեր էին Սառա-Պէրնար : Առաջին ներկայացումն էր «Գամէլիազարդ տիկին» :

Չէի հաւատար աչքերուս : Այս այն կի՛նն էր որու մտախն այնքան լսեր եմ : Ի՛նչպէս պիտի ներկայացնէր այս կինը, որ իր ճիւղաշախի դեմքով կարծնար հմայելի հասարակութիւնը, պատկերացնելով Մարկիթիթը :

Անընչպէս հասաւ այդ ցանկալի օրը : Հինգ ոսկի որ մէկ օթեակի գինը : Ես շատ նեղ դրութեան մէջ էի :

Ամուսինս ինձ կ'ըսէր .

— Ազնի՛ւ, քանտ ոսկի ալ ըլլայ, տոմսակ առ : Ի՛նչ ընենք, տե՛ս անգամ մը : Գու՛ն մի՛ մտածեր թէ մեր կարողութիւնէն բարձր է ասիկա : Ե՛մէն օր չէ :

Բայց ես գիտէի որ իրաւունք չունիմ ծախսել այդ հինգ ոսկին :

Չէի կարող երթալ «փարթեր», քանի որ չէի գիտեր թէ ինձի ի՛նչ կը պատահի : Վ'ուզէի որ ոչ զք զիս տեսնէ, և ես ալ ոչ մէկը տեսնեմ :

Ամուսինս գնաց գործին, ես ալ հագուելով կ'այ փողոց՝ առանց գիտնալու թէ ո՛ր կ'երթամ :

Քայլերս ուղղուեր էին դէպի թատրոնի կողմը :

Յանկարծ աչքիս հանդիպեցաւ պատին փակուցուած ազգարարութեան վրայի ուրուականը :

Եկայ թատրոնին առջև անցու դարձ ընել : Թատրոնի կապարաւու Յոյնը, որուն շատ տարիներէ ի վեր ծանօթ էի, ձեռքս բռնեց .

- Տիկին Հրաչեայ, ի՛նչ ունիք :
- Պարոն Խանքո, պարզապ օթեակ կա՞ :
- Ինչո՞ւ . քեզ մի առաջ չըսէք : Աչ մէկ հատ մնացած է : Եթէ կ'ուզէք, ձեզ տամ երկու «Փօթեղ» :

Այդ միջոցին, եկաւ պարոն մը քանգատելու թէ իր օթեակը փոխեր են և ուրիշ մը ուզարկեր են :

Կապարաւուն, տոնելով անոր ձեռքէն չուզած օթեակին տոմսակը, ինձ տուաւ .

- Արեք, տիկին, ըսաւ, թող ան նորէն սպասէ իր ուղած օթեակին :
- Ուզեցի վճարել : Բայց մերժեց .
- Ի՛նչ, ձե՛նէ՛ ալ դրամ ստանանք :

Ընորհակալութիւն յայտնելով հետացայ :
Ներկայացուցը պիտի սկսէր ժամը Յին: Բայց
ժամը Յին արդէն օթեակին խորը նստած էի :

Հասաւ վարպետը բարձրանալու լողակն :
Սառան սեսարան եկաւ :

Աստուած իմ, ի՛նչ կը սպասէի, ի՛նչ տես-
նեմ: Ճիւղող չէ: Ընդհակառակն շատ համակրելի
է և կանոնաւոր դիմագծեր ունի: Բայց իմ
գիտացած Մարկրիթն չէ: Հմայիչ ձայնով կը
խօսի: Հրաշայի էսժէնիւ տրամաթիք մըն է:
Հաստ լաւ ներկայացուց: Բայց ես մնացի մութ
և չկարողացայ լուսաւորուել :

Ցուն հասանք թէ չէ, առի խաղը, և
սկսայ կարողալ: Ա՛հա այն ստան լուսաբանուե-
ցաւ հարցը: Տեսայ որ Սառա-Պէրնար, ընչելով
գերեւն երկու նկարագիրը. պահած էր մէկը,
այն է տրամաթիքը: Ըստ հեղինակին, մենք
պիտի տեսնէինք առաջին արարուածին մէջ կեղ-
տոտ կինը . եւ այն ստան պիտի կարողանայինք
նկարել տարբերութիւնը երրորդ արարուածի
Մարկրիթէն: Կաթիլ մը սէր գտեց, մաքրեց
այդ կեղտոտ կինը, այնպէս որ ա՛յլ ոչ մենք կը
տեսնենք, ո՛չ ինքը կը ծանշայ առաջուան
Մարկրիթը: Հեղինակը կ'ըսէ՝ «Սիրէ՛ր գանձիկա,
և ան պիտի մաքրուի ինչպէս բերեղո՞ւ»:

Սառա առաջին արարուածէն էր սկսած
երրորդի Մարկրիթը: Այն ստան եկայ այն
եղբակացուածեան թէ տիկին Սառան կ'երևայ
թէ շուգելով իր անձը յոգնեցնել, այդպէս էր
ըրած, կամ ըսած էր թէ Պոլսեցիք ոչինչ կը
հասկնան, անոնց համար աս ալ շատ է:

Բնական է, այս և այն կողմէ հարցումներ
կ'ընէին թէ ի՛նչ է իմ կարծիքս: Բարեկամե-
րէս մէկ երկուքին ըսի կարծիքս .

— Սառա շնորհակայցուց ամբողջ խաղը :

— Ի՛նչ կ'ընէք, տիկին, այդ արդէն չա-
փազանց է :

Բայց իմ կարծիքս ոչ որ կարող էր փոխել :

Սառան սեսած օրէս՝ փորթիկ անկիւն մըն
ալ ինձի սուրի Հայոց թատրոնին մէջ: Գիտէի
այժմ որ փարիսեցի չեմ:

«Գամէլիազարգ տիկին,էն յետոյ, Սառա
Ներկայացուց «Ատրիէն Լըբուվրեօր», ի՛նչ ըսել
այդ անըման Ատրիէնի համար. առաջին արար-
ուածէն մինչև վերջինը հրաշալի էր . իմ կար-
ծիքովս, քանի Սառա-Պէրնարը կ'ապրի ու կը

Ներկայացնէ, այդ իր ստեղծագործած Ատրիէնը
ուրիշ ոչ որ պէտք է համարձակի ներկայացնել-
իսկ գտնով «Թօսքա.ին, երեք արարուած սքան-
չելի էր, «Ատրիէն.ի հասարար . բայց շորորդ
ու հինգերորդը անտանելի էր ինձ համար,
որովհետեւ առաջին երեք արարուածները բնա-
կան դպրոցին կը պատկանէին, իսկ շորորդն ու
հինգերորդը՝ «Էֆէքտ»ն երու դպրոցին :

Ժ.Գ.

Պ. Պետրոսեան, Պ. Տոնպետեանի հետ,
Պոլիս եկաւ: Այդ ժամանակ ես կը բնակիի
Խօզուրսոճի-Չէշմէսի ամարանոցը: Ինձ մօտ գա-
լով առաջարկեց երթալ Թիֆլիս: Բայց ես
մերժեցի, պատճառ բունելով տկարութիւնս:
Առաջարկեցի տանիլ տիկին Սիրանոյշը :

Ան ինձ պատասխանեց .

— Ի՛նչ կ'ընէք, տիկին, ես չեմ կարող
տիկին Սիրանոյշը տանիլ առաջին գերերու հա-
մար. Թիֆլիսեցին վարժ չէ գանկա առաջին
գերերու մէջ տեսնելու :

Համոզեցի դիմքը թէ անկից լաւ կարելի
չէ գտնել Պոլսոյ մէջ :

Աերջապէս, Պ. Պետրոսեան հասնեցաւ
տանիլ տիկին Սիրանոյշը: Բայց Սիրանոյշ չէր
ուզեր երթալ: Ջգերը սաստիկ դրգուած էին:
Տկար էր: Համոզեցի Սիրանոյշը ընդունիլ պայ-
մանը :

— Քայքայուած ջիղերդ պիտի վերակեն-
դանանան, և թէ դուն կրկին մտնես ասպարէզ:
Տիկին Սիրանոյշ և Պ. Պետրոսեան գացին
Թիֆլիս :

Թէև ես քաշուած էի բեմէն, բայց միշտ
կը հետևէի Անթուանի «Ազատ Թատրոն»ին վե-
րաբերեալ քննադատութիւններուն: Ար կար-
դայի, և կը պատկերացնէի մտքիս առջև մեր
բեմը, և կ'ըսէի .

— Ժամանակ է «Էֆէքտ»ն երու դպրոցը
կործանելու :

Գիշեր ցորեկ կը մտածէի այդ մասին, փոր-
ձեր ալ կ'ընէի :

1893ին, Պ. Աբրահամեան Թիֆլիսի քոմի-
թէի կողմէն գալով Պոլիս, ինձ մօտ եկաւ, և
ինչորեց անպատճառ իմ մանակցութիւնս:

Ես նախ քոյ թէ ինձ համար անկարելի է :
Խնդրեց ինձ յայտնել թէ ո՞րքանով կարող
էի երթալ : Պատասխանեցի՝ «Առնուալիս (100
բուլակի ամսական» :

Ան ինձ ոչինչ ըսելով՝ հետագրեր է Թիֆ-
լիս : Երբ ստացեր է հետագրի պատասխանը
թէ՝ «Համաձայն եմք», եկաւ անմիջապէս զիս
գտաւ :

— Կ'ընդունին ձեր պայմանը, ըսաւ, ուրիշ
առարկութիւն ունի՞ք :

Ես շատ գէշ զգացի զիս : Ցասներկու տարի
յետոյ, կրկին պիտի կըքէի պայմանագրութիւն:
Կոկորդի տկարութիւնէս կը վախնայի : Կոկորդս
այդ միջոցին իրաւ է թէ չէր ցաւեր, բայց
ձայնս կտրուած էր :

«Գարբնոցապետ»ի Քլարան սկսայ ուսում-
նասիրել Պոլսէն :

Հագիւ անցեր էր երկու օր, արդէն կո-
կորդս սխաւ ցաւի :

Ճար չկար, պէտք էր ծամբայ ելլել :

Պ. Արրահամանց Պ. Ալիքսանեանի հետ
ալ բանակցութեան էր մտած :

— Ալիքսանեան եկաւ ինձ մօտ .

— Տիկին, ըսաւ, դուք միշտ եղած էք
անկեղծ . կը խնդրեմ, նորէն եղէք, և սա հար-
ցումիս ալ պատասխանեցէք անկեղծութեամբ :
Արդեօք ես ընդունելութիւն կը գտնեմ Կով-
կասի մէջ :

— Դուք շատ գարնանայի հարցում մը
կ'ուղղէք : Ես ի՞նչպէս կարող եմ գիտնալ :

— Ո՛չ, դուք գիտէք իմ կարողութիւնս,
ուստի ըսէք :

— Ահաւասիկ ըսեմ: Եթէ դուք պիտի ներ-
կայացնէք այնպէս ինչպէս այստեղ, վստահ եղիք
որ ընդունելութիւն չէք գտներ, բայց դուք
գերասան էք, լուրջ կ'ուսումնասիրէք ձեր դե-
րեւը ինչպէս որ պէտք է, ևս վստահ եմ որ
այն ատեն ընդունելութիւն կը գտնէք : Պ.
Մնակեանն ալ այստեղ՝ քանի մը գաւաթ կոն-
ծելով բեմ կ'ելլէ ու կը պոռայ կը կանչե-
թուրք հասարակութիւնը գոհ կը մնայ անկեղ
ալ, ձեռն է գլ. բայց հոն նոյն բանը չէ. Պ.
Մնակեանն հոն շատ լաւ կ'ուսումնասիրէ իր
դերերը, անիկա հոն լաւ կ'երասան է :

Ա. Ս խօսքիս վրայ, Պ. Ալիքսանեան, վեր
կենալով տեղէն .

— Ո՛չ, տիկին, ըսաւ, չեմ գար :

Հաստ ստիպեցի որ գայ. բայց մերժեց :

Պ. և տիկին Պիննէմէճեանն, Արրահաման
և ես՝ երեք զուգահեռովս՝ մտաւր շողենաւ :
Խնդրեցի Պ. Պիննէմէճեանէն որ Արմանի գերը
բերէ ինձ մօտ, որքան որ կարելի է շողենաւի
մէջ՝ օգնեմ՝ իրեն պարտասելու :

Տիկին Պիննէմէճեան ըսաւ .

— Ո՛չ, պէտք չկայ, Ռուբէն. ինձի ըսեր
են թէ ինչպէս որ գիտէք, այնպէս ալ կը ներ-
կայացնէք : Ուրիշի խորհուրդ մտիկ մի՛ ընեք :
Ստիպուեցայ ըսել որ իրաւունք ունին, սխա-
լիւ եմ :

Հասանք Թիֆլիս : Պ. Սարգսրեան առաջին
անգամ եկաւ զիս տեսնելու : Անոր առաջին
խօսքերը եղան .

— Ինչո՞ւ եկաք : Ինչ անուն որ ունեիք
ստաներկու տարի առաջ, այժմ պիտի կորսնցը-
նէք : Արգիւրները արդէն ձեր դէմ են գրած
թէ՝ «Մեզ հարկաւոր էր Մնակեան և Ալիք-
սանեան, մեզ հարկաւոր էր դերացոյց և ոչ
չըրչեայ : Ցասներկու տարի տունը մնալով ար-
դեօք յառաջդիմե՞ց տիկինը որ 300ի տեղ 400
պիտի ստանայ» :

Կարծեմ այդ յօդուածը տպուած էր Աքո-
բադի մէջ : Սաստիկ բարկացայ Սարգսրեանին
գէտմ :

— Եթէ այդպէս է, զիս ինչո՞ւ կը կանչեն
Ա. Ս., ինչ անուն որ ունէր թողած նախկին
Հրաչեան, այժմու Հրաչեան պէտք է կործանէ
զայն : Ի՞նչ էր առաջուան Հրաչեան. ի՞նչ էինք
բոլորս : Մենք գիտէինք որ վարագոյրը փակուե-
լու պահուեալ եթէ գեղեցիկ պատկեր մը ցոյց
տանք՝ արդէն պիտի ստանանք ծափահարութիւն
"Էֆէքտ"ներու դերակատարներ էինք : Երբեմն
կը շինէինք ոսկի ռոպկեր, բայց իրաւու կցե-
լով շղթայ շինել չէինք կարող : Ա. Ս., անկցի՛
"Էֆէքտ"ներու հին դպրոցը : Ես պիտի ներկա-
յացնեմ այժմ նոր դպրոցով :

— Բայց քեզ չեն հասկնար, թող կ'ըլլաս,
"Էֆէքտ"ներու թովզ կը կորչիս :

— Ի՞նչպէս թէ չեն հասկնար, ժողովուրդը
չէ կարող գիտնալ թէ ի՞նչպէս պիտի ներկայա-
ցընենք որ լաւ ըլլայ՝ բայց երբ կը տեսնէ
լաւը, անմիջապէս կը գանազանէ գէշէն : Ահա՛,
մէկն ալ դուն ևս որ քաղաքիար չունիս իմ ըսած

զարցնել վրայ : Ա՛ս սա դերը , և յուշէ՛ք ինձի :
Սխալ փորձել մէկ երկու կտոր՝ բնական
զարցով : Սարգսրեան եկաւ ձեռքերս համբու-
րելու :

— Ներքեցէ՛ք , տիկին :

— Բայց այժմ գնա՛ , որովհետեւ սաստիկ
յուզեցիր զես : Ի՛նչ քաղաք է սա , որ երբ գամ,
անպատճառ պէտք է՛ հառեւելով բեմ՝ ելլեմ :

Քօմիթէն ինձ առաջարկեց երկու լիէ երկը
օրէն բեմ ելլել : Ես չընդունեցայ :

Պի՛նէմէ՛ձձեաններուն
առաջարկեց Անոնք ըն-
դունեցան “երկու Որ-
բերու մէջ երևալ :

Ես նորէն գիմեցի
տին . Պի՛նէմէ՛ձձեանին .

— Գէշ կ’ընէ՛ք . ըսի-
կը ներկայացնէք “եր-
կու Որբերը , այնպէս
ինչպէս Պոլիս : Ատիկա
լաւ չ’ըլլար ձեզ հա-
մար : Աւելի լաւ է
չընդունիք և պատ-
րաստուիք լաւ խաղի
մը մէջ և յետոյ բեմ
ելլէք :

— Ի՛մէ այժմ բեմ
չելլեմք , ամսական ալ
չպիտի ստանանք :

— Բայց , տիկին ,
այս միջոցիս՝ գէթ ինձ
համար՝ զրամի հարց
չկայ , այլ պատուոյ :
Ինչ որ է , ներկա-
յացուցին :

Յաջորդ օրը՝ “Գարբ-
նոցապետ”ի փորձն էր
նշանակուած : Գացի
Թատրոն : Լսեր էի լիէ
գերասաններն ալ հա-
կառակ են իմ 600 րուպի
ամսական ստանալու
և պիտի նային ինձ խորթ
աչքով :

Ջիզերս սաստիկ գրգռուած էին
երբ Գացի փորձի : Առաջին
արարուածի վերջը , գերա-
սանները սկսան ձեռքս
համբուրել : Ես սաստիկ
կուլայի :

— Տիկին . կ’ընէին , բայց
գուք ինչո՞ւ
այսքան տարի առնը
նստեր էք : Գացէք Մոս-
կուա , Փեթեքարչի :

Տամերկու տարի յետոյ
երբ առաջին ան-
գամ բեմ ելայ , սաստիկ
ծափահարեցին , բայց
աչքերս միմեցան : Կրթընեցայ
զրոն , և առանց
ծափահարութիւններուն
ուշ գնելու՝ ինքնիրենս
բսի .

— Ինչու կը վախմամս
Միթէ այս այն տեղը
չէ ուր ևս ինքզինքս
միշտ աւելի ազատ եմ
զգացեր քան կեսնքի
մէջ :

Տորոցի աչքերս ,
հաւաքեցի ուժերս և
ուզողակի նայեցայ ժո-
ղովրդին : Յետոյ ընդու-
նեցայ ինձ մատուցուած
ծաղկեղէնով լեցուն
զամբիւղը :

Այլ ևս գերիս մէջն
էի :

Առաջին արարու-
ածէն յետոյ , Պ. Սար-
գարեանը եկաւ մտտ .

— Հու՛ւ , տիկին ,
բաւ , ժողովուրդը ձեզ
բեմ կը կանչէ :

Ելայ բեմ :

Տեսայ որ ընկերներս
էին որ բեմի վրայ
կը ծափահարէին զես
մատուցանելով դափ-
նեայ պատ :

Հնորհակալութեամբ
ընդունեցայ :



ՏԻԿԻՆ ՀՐԱԶԵԱՅ
Գամէլիազարդ սիկիւն . 1882 . (Կովկաս)

ԺԻ

Նկարչին իր մահուանէն կամ
ապարեզէ
քաշուելէն յետոյ , կը
Թողու ընդ միշտ իր
նկարը հասարակութեան
առջև , հեղինակն իր
գրքերը , բանաստեղծն
իր բանաստեղծութիւն-
ները . իսկ գերասանը
աշինչ կը Թողու , բաց
ի քանի մը քննադատական
յոգութեաններէ որոնցմէ

միայն ապագան պիտի կարողանայ գաղափար կազմել գերասանին վրայ :

Բող ներուի ինձ ուրեմն 1893ի շրջանին լրագրներու հրատարակած յօդուածներէն մէկ քանին այստեղ յիշատակել :

Արշաքան, Թիւ 112, 26 Սեպտ. 1893

«Մտնոյ 24ին, տիկին Լրաշեւայ ներկայացրեց արքունական թատրոնում Ժորժ Օնէի «Գարրնոցպետը» գրաման :

«... Գաղով դերակատարներին, մենք կը սխիներ տիկին Լրաշեւայից : Բնութիւնը միանգամայն շուսիւլ է այդ գեղարուեստի քրմուհուն ամեն բան, գեղեցկութիւն, տաղանդ, շնորհ (grâce), մի փոքրիկ բաց միայն թողնելով, և այդ բացը նրա ձայնն է : Այդ ձայնը բուսական ազգու է գրաւիչ և երբ տիկինը կամացուկ, փաղաքշանք կամ թէ շշուկով է խօսում : Իսկ երբ ըստ պահանջման դերին, հարկ է համարում բարձրացնել ձայնը ո և է ոգևորութիւն կամ գայտրթ արտայայտելու համար, այն ժամանակ ցաւելով պէտք է սակ որ ցանկալի տպաւորութիւնը չէ գործում... Բայց թողնենք ձայնը, ո՞վ է մտածում գրա մասին երբ նայում են նրա դիմախաղին (փփփ) և շարժուածքին : Մարդ իրօք յափշտակում է այդ դիմախաղով : Լազիւ պատահել է մեզ տիեզերահաշուակ դերասանների մէջ այդ աստիճանի զգայուն և հոգեբանորէն խորին կերպով արտայայտուած դիմախաղ : Յծեբրի, աշեբրի, շըրթունքների հարիւր տեսակ փոփոխուիլը, րոպեաբար մի գգաջուովից դէպ ի միւսն անցնելը, մարդկային հոգւոյ զօրեղ յատկութեանց խոր վշտի, բուռն ուրախութեան, վրդովման, զղման գայտրթի» այդքան կենդանի և սիրուն կերպով արտայայտելու եղանակի ընդունակութիւնը... Բայց այդ դէմք չէ, այլ անեզր աշխարհ է, անհուն ծով է, ուր մարդկային կրքերը ալիքների նման իրար մղում և իրար փշրում են : Ահա՛ տիկին Լրաշեւայ : Բայց ես շատ թոյլ ուրուսագիծ միայն սուի, ասածս հասկանալու համար՝ տեսնել պէտք է :

«Այդ բոլորի վրայ աւելացնելու է և այն, որ տիկինը ոչ միայն կատարելագուս հասկացել, մանրացնելու ուսումնասիրել էր իւր դերը, այլ նա միանգամայն տիրապետում էր այդ դերին : Այ՛, դա ճիշտ կարա տը Բօլիոն է, գլխից

մինչև ոտքի ծայրը արիտոկրատ, դքսուհի, հպարտ, ինքնահաւան, բայց և վեհանձն, սիրող, ատող, զղջացող, գգայուն :»

ՅՆԻԽՆ

Կովտու լրագիր (Թարգմանութիւն) .

«Սեպտեմբերի 24ին տեղի ունեցաւ հայկական խմբի երկրորդ ներկայացումը, Ժորժ Օնէի «Գարրնոցպետ» թատրախաղը, որուն մէջ առաջին անգամ դուր եկաւ տիկին Լրաշեւայ կատարելագուս յաղթական և յաջող : Ցաղանդաւոր և փորձառու դերասանուհին Քլարայի դերին մէջ իր մտածուած արտիստիկական խաղով, հարուստ և արտայայտիչ միջիջով, գրաւեց բոլոր հանդիսականներուն ուշադրութիւնը և ամենագեղեցիկ տպաւորութիւն գործեց : Ափսոս միայն որ տիկինը ձայնը նկատելի կերպով ետ կը մնայ՝ իր բոլոր արուեստագիտական ուշագրաւ յատկութիւններէն : Բոլոր ժամանակ՝ ժողովուրդը բուռն և աղմկալից ծափերով ի տես կը կանչէր զինքը : Տիկին Լրաշեւայ հասարակութենէն ստացաւ գեղեցիկ կողով մը՝ գեղեցիկ ծաղիկներով լիցուն և երկզոյն ժապաւէններով զարդարուած, և դերասանական խմբէն՝ պլասակ մը :»

Թիֆլիսի լիւթի (Թարգմանութիւն) .

«Լինգալթի, սեպտեմբեր 24ին, Արքունական թատրոնին մէջ տեղի ունեցաւ տիկին Լրաշեւայի տեղին : Այս առաջին անգամը չէ որ յարգելի տիկինը բեմ կ'ելլէ Թիֆլիս, այլ այդ եղաւ 1881 Սեպտ. 3ին՝ «Բաթէրին Լոյուարտի» դերին մէջ : Եւ դեռ այն ժամանակ Թիֆլիսի ամբողջ հայ մտուելը գտաւ իր մէջ անզուգական ընդունակութիւններու տէր արուեստագիտուհի մը և միաբերան վկայեց իր արտաքին ինչպէս ներքին բարձր ձիրքերը և հարուստ դիմախաղը : Այս անգամ ալ Քլարայի դերը տիկին Լրաշեւան կատարեց գեղեցիկ կերպով : Հայ հասարակութիւնը շատոցն ուր չէ տեսեր բեմի վրայ այսպիսի խելացի արթիւտ, որու համար ալ տիկինը վարձատրուեցաւ աղմկալից ծափահարութիւններով և միևնոյն ժամանակ հասարակութենէն ստացաւ ծաղիկներով լի կողով և պսակ :»

Տարու .

Տիկին Լրաշեւայի խաղը կլարայի դերում

բաւական չէ որ վայելագոյն էր, շնորհալի . նուրբ, նաև վերին աստիճանի բնական և մըտածուած էր : Որչափ գգայմուծը, որչափ ճիշտ ըմբռնողութիւնն Ալարայի հոգեկան գրութեան : Մենք տեսնում էինք մի հպարտ գոռոզ էակ, գոռոզ այնքան որքան կարող է լինել մի կին . մենք տեսնում էինք այդ վիրաւորուած գոռոզութեան հետեանքը — ամուսնութիւնը չսիրած մարդու հետ իբր վրէժ սիրած մարդուն ասելութեան գէժ, և ահա մի շարք տանջանքները :

“Ի՛նչպիսի սարսուռ անցաւ Ալարա-Հրաշեայի մարմնով, երբ նա աւաջին անգամ մնաց միայնակ ամուսնոյն հետ : Որչափ գրուանք կար այդ սարսուռի մէջ . բայց և որչափ անձնուիրութիւն կար այն “երջանիկ եմ” լի մէջ որ Ալարան արձակուե՛մ է երբ դրամայի վերջում ձեռք է բերում իւր հաշտութիւնը Կոստանտնուպոլսի քաղաքի վերջը չկար : Տիֆուսը նուիրուեց մի շքեղ գամբիւղ մասնախմբի կողմից . իսկ աւաջին արարուածից յետո՛յ՝ գեղեցիկ պսակ՝ դերասանական խմբից, որը բնիկ վրայ կանգնած՝ ծափահարում էր տիֆուս (ժայռաէջի վրայ անկեայ տառերով փայլում էր հետեւեալ բառերը՝ “Ողջամբ գալուստ Տ. Հրաշեայ 1893 Սեպտ. 24 — ընկերներից”) :

(Շարունակելի)

ՀՐԱ.ՉԵԱՅ

Գ Ի Ի Ղ Ա Կ Ն Ե Ր Ը

Վտնորուն մէջ, ընկեր, ուր դուք ծրծեցիր՝ Վաղուս կեանքին համար հըսկայ սերունդիդ՝ Հեքերն ըմբոստ ստիներու արժեքին՝ Գիւղակներու ողբունքով ծաղիկն է վրտուած : Ո՛չ մէկ ժրպիտ տրէին անոր դալուկին Արշալոյսներն անոջ՝ նախկին այգերուն, եւ ոչ իսկ հոն հակեցաւ Մահամբը հուկի սարսուռով Հիւսնդագին ճառագայթն Աշնանահար իրիկունս : Բարձրացիր, օ՛ն, ժայռին վըրայ, օ՛վ ընկեր, Ասողերուն տակ դիտելու Թըրուսուութեան վըճուկի ժանտ, աննըւեր Եր գիւղերուն կուգայ կաթն իր ջամբելու

Գիշերը երբ կ'իջնէ զըժիւմ թեւերով : Եւ նէ իր շար ու չոր մատով կը շարուէ Եւ նոթութիւնն և տառապանքն և ծարաւն Որոնց, բարէ՛, մութին մէջէն կ'երկարեն Հացին բարի յայտով, սէրով պըրկուած Երենց ձեռները վըտիտ Գըժբախտներու կարուաններն անհամար : Կոստանտնուպոլսի, ահա՛, կ'անցնին, և լուսինն Երտասուելով մատաններն այդ կը կորցայ Ուր կ'այրի էջը անձանոթ վեպերու : Ընտը որ արդ կորքարմակ կ'ընթանան Կոստանտնուպոլսի ծամբաներու երկայնքէն Երբեմն էին պարմանները գիւղին Ար սէրն իրենց՝ աղբիւրներուն պատմեցին, Եւ գետակին զոյգութեան մէջ երկուցին Դաշտուրանին գինին, բարիքը հօտին : Աւ կը քալին անոնք մինչև իրիկուն Հովերուն մէջ փետելով վարսն ըսպիտակ Բըրդգըզկեալ հէք ծերութեան . . . Մայրերն, ահա՛ կուգան՝ սեղմած կուրծքերուն Կոթի՛ շրթութեանը մանկան, Եւ շունչն իրենց կեանքին, մահուան մէջ բաժնած՝ Գիշերին տակ կ'անիծեն Պըլլուկին երգն երջանիկ : Գեղեցիկութեան մէջ թարշամած աղջիկներն — Սէրերն որոնց ինկայիզած կը ճըշեն — կը կոխտան վարդին կոկոն՝ որ այգուն Բարգն իրենց պիտ՝ հեգներ : Եւ վարը հոն հաւաքուած Բապիներն շուրջ վըճուկին Կ'աղագակն ազօթը մը խուլ ու գրծեն . “Գըթա՛, օ՛վ Մայր, օ՛վ Տառապանք պաշտելի . Մեր արգաղիբ վերջին նըւէրն ենք բերած Պատուանդանիդ մարմանն անով պըճներու . Ըտաշխն՝ որ հին Պաղեստինի դաշտերէն ինքին բարի մեր պապներն՝ Անպապի աստուածներուն բոյրերով Կ'օժէ հաւաքքն ետտանույզ ոսկիին . Ըրէ՛ որ, օ՛վ Տառապանք, օ՛վ Մայր գըթած, Վաղն իսկ ցաթի շառայլ մը գէթ խաբուսիկ խաւարին մէջ հիւղերուն : Ըրէ՛ որ գիւր ԸԼԼԿ վերկեք ցաւին Մինչև վախճանը մեր խաչի սարսուռին : Չենք ուզեր մենք ժրպիտ, հարները կեանքին, — Զըրուրուեցաւ արգէն հէքին հոս իրնդալ — Ա՛հ, տո՛ր մեզի պարգեւ գէթ անըման Անդորբաւետ մահերուն : Գուն թէև քա՛ր՝ մի՛ ընէր սիրտըդ ալ քա՛ր . Գըթա՛, օ՛վ Մայր, օ՛վ Տառապանք պաշտելի . Եւ պոհունին վըրայ հօտին այս թըրուսու Տառապանքն իսկ—վըճուկ գըթա՛տ, մայրական—